# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Ծառայությունների ազատ առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման մասին

Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով «Ազատ առեւտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագիրը,

ընդունելով տնտեսական ինտեգրման սահմանները հետագայում ընդլայնելու անհրաժեշտությունը,

հաշվի առնելով տնտեսության զարգացման համար ծառայությունների ոլորտի աճող նշանակությունը,

ցանկանալով ստեղծել ծառայությունների փոխադարձ առեւտրի ընդլայնման եւ դրա ազատականացման մակարդակի բարձրացման համար պայմաններ,

ցանկանալով ստեղծել մի Կողմի անձանց կողմից մյուս Կողմերի տարածքներում ներդրումների իրականացման համար բարենպաստ պայմաններ,

ղեկավարվելով իրենց պետությունների բնակչության կենսամակարդակի շարունակական բարձրացման ձգտումով,

ղեկավարվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով ու հիմնվելով 1994 թվականի ապրիլի 15-ի Ծառայությունների առեւտրի գլխավոր համաձայնագրի (ԾԱԳՀ), այդ թվում՝ ԾԱԳՀ-ի V հոդվածի նորմերի վրա,

ելնելով նրանից, որ սույն համաձայնագրի դրույթներն ուղղված են ծառայությունների առեւտրի, ընկերությունների հիմնադրման եւ գործունեության, ինչպես նաեւ Կողմերի միջեւ ներդրումային համագործակցության զարգացմանը,

**համաձայնեցին հետեւյալի մասին.**

## Հոդված 1.

## Սահմանումները

Սույն համաձայնագրում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

**ԱՀԿ՝** Առեւտրի համաշխարհային կազմակերպություն, որն ստեղծվել է «Առեւտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաքեշի համաձայնագրին համապատասխան.

**ԾԱԳՀ**՝ 1994 թվականի «Ծառայությունների առեւտրի գլխավոր համաձայնագիր», որը պարունակվում է «Առեւտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաքեշի համաձայնագրի 1Գ հավելվածում.

ԾԱԳՀ-ի դրույթներին կամ ԱՀԿ-ի շրջանակներում կնքված այլ միջազգային պայմանագրերին կատարված հղումները սույն համաձայնագրում գործածելու դեպքում դրանցում պարունակվող «պայմանավորվող կողմ/պայմանավորվող կողմեր» կամ «անդամ/անդամներ» հասկացությունները նշանակում են համապատասխանաբար Կողմ/Կողմեր այնպես, ինչպես դրանք սահմանված են սույն համաձայնագրի նախաբանում.

**գործունեություն՝** «հիմնադրում» եզրույթի սահմանման «ա»-«գ» ենթակետերում նշված իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների եւ (կամ) այդ սահմանման «դ» ենթակետում նշված ֆիզիկական անձանց առեւտրային կամ մասնագիտական գործունեություն, այդ թվում՝ ծառայությունների առեւտրի ու ապրանքների եւ (կամ) ծառայությունների արտադրության գծով՝ բացառությամբ պետական իշխանության գործառույթների կատարման ժամանակ իրականացվող գործունեության.

**եկամուտներ՝** ներդրումներից ստացված միջոցներ, եւ ներառյալ, ի թիվս այլոց՝ շահույթը, շահաբաժինները, տոկոսները, կապիտալի աճից ստացվող եկամուտները, ռոյալթիները եւ այլ վարձատրությունները.

**Կողմի օրենսդրություն՝** Կողմի օրենքներ եւ այլ նորմատիվ իրավական ակտեր.

**ներդրումներ**՝ մեկ Կողմի ներդրողի կողմից մյուս Կողմի տարածքում՝ վերջինիս օրենսդրությանը համապատասխան ներդրված ակտիվներ, որոնք ունեն ներդրումների բնութագրեր՝ ներառյալ այնպիսիք, ինչպիսիք են կապիտալի կամ այլ ռեսուրսների, շահույթի ակնկալիքի եւ ռիսկի ստանձնման գծով պարտավորությունը՝ ներառելով հետեւյալը, սակայն չսահմանափակվելով դրանցով՝

դրամական միջոցներ, արժեթղթեր, շարժական եւ անշարժ գույք.

ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունքներ, որոնք տրամադրվում են Կողմի օրենսդրության հիման վրա կամ պայմանագրով՝ ներառյալ, մասնավորապես, բնական պաշարների հետախուզման, մշակման, արդյունահանման եւ շահագործման համար իրավունքները,

գույքային եւ դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ՝ ներառյալ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքները:

«Ներդրումներ» եզրույթը չի ներառում՝

ա) փոխատվությունները Կողմին կամ այն իրավաբանական անձին, որը պատկանում է Կողմին կամ վերահսկվում է նրա կողմից,

բ) դրամական միջոցների մասով պահանջները, որոնք առաջանում են բացառապես ապրանքների կամ ծառայությունների վաճառքի կամ վարձակալության առեւտրային պայմանագրերից,

գ) դրամական միջոցների մասով պահանջները, որոնք առաջանում են բացառապես վարկի երկարաձգումից՝ կապված այնպիսի առեւտրային գործարքի հետ, ինչպիսին առեւտրային ֆինանսավորումն է:

Ներդրումների ձեւի ոչ մի փոփոխություն չի ազդում դրանց՝ որպես ներդրումներ որակվելու վրա, եթե այդ փոփոխությունը չի հակասում այն Կողմի օրենսդրությանը, որի տարածքում ներդրումներն իրականացվել են:

«Ներդրումներ» եզրույթը ներառում է մեկ Կողմի ներդրողների ներդրումները, որոնք իրականացվել են մյուս Կողմի տարածքում հիմնադրման տեսքով՝ ինչպես սահմանված է եւ կարգավորվում է սույն համաձայնագրի «Հիմնադրումը եւ գործունեությունը» III գլխով:

**Կողմի ներդրող**՝ Կողմերից մեկի ցանկացած անձ, որն իրականացրել կամ իրականացնում է ներդրումներ մյուս Կողմի տարածքում:

«Կողմի ներդրող» եզրույթը չի ներառում՝

ա) ցանկացած ֆիզիկական անձի, որն այն Կողմի քաղաքացի է, որի տարածքում իրականացվում կամ իրականացվել են ներդրումները.

բ) ցանկացած ֆիզիկական անձի, որը ներդրումների իրականացման ամսաթվի դրությամբ եղել է այն Կողմի քաղաքացի, որի տարածքում ներդրումներն իրականացվել են.

գ) Կողմի ցանկացած իրավաբանական անձի, որը պատկանում է մյուս Կողմի

անձին կամ վերահսկվում է նրա կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն.

դ) Կողմի ցանկացած իրավաբանական անձի, եթե այդ իրավաբանական անձը մյուս Կողմի տարածքում չի իրականացնում էական գործարար գործունեություն կամ եթե այդ իրավաբանական անձը պատկանում է երրորդ պետության անձանց կամ վերահսկվում է նրանց կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն:

**երրորդ պետության ներդրող**՝ սույն համաձայնագրի կողմ չհանդիսացող երրորդ պետության ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

**անհատ ձեռնարկատեր՝** Կողմի ֆիզիկական անձ, որը, ազգային օրենսդրությանը համապատասխան, գրանցված է որպես անհատ ձեռնարկատեր.

**ծառայության բացառիկ մատակարար**՝ Կողմի ցանկացած պետական կամ մասնավոր անձ, որը Կողմի համապատասխան ծառայության շուկայում պաշտոնապես լիազորված կամ փաստացիորեն ստեղծված է որպես այդ ծառայության ոչ մեծ թվով մատակարարներից մեկը, եւ Կողմի տարածքում ծառայությունների այդ մատակարարների շրջանում մրցակցությունն էապես սահմանափակված է.

**լիցենզավորում՝** Կողմի օրենսդրությամբ սահմանված ընթացակարգ եւ իրավասու մարմինների գործունեություն՝ լիցենզիաների (թույլատրական փաստաթղթերի) տրամադրման, վերաձեւակերպման եւ գործողության ժամկետի երկարացման, մերժման, կասեցման եւ չեղյալ հայտարարման գծով.

**անձ**՝ Կողմերի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

**Կողմի միջոց** ՝ Կողմի օրենսդրություն, ինչպես նաեւ՝ այդ Կողմի մարմնի կամ պաշտոնատար անձի ցանկացած որոշում, գործողություն կամ անգործություն, որոնք ընդունվել են այդ Կողմի պետական իշխանության ցանկացած մակարդակով, դրա տեղական ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների կողմից՝ այդ մարմինների կողմից նրանց պատվիրակված լիազորություններն իրականացնելիս.

**ծառայությունների առեւտրի վրա ազդող՝ Կողմի միջոցը** ներառում է միջոցներ հետեւյալի առնչությամբ՝

1) ծառայության գնում, դրա դիմաց վճարում եւ օգտագործում,

2) ծառայությունների հասանելիություն եւ օգտագործում՝ կապված այն ծառայությունների մատակարարման հետ, որոնց նկատմամբ Կողմերը սահմանել են բնակչությանը դրանց լայնածավալ առաջարկի պահանջներ.

**հիմնադրման եւ գործունեության վրա ազդող՝ Կողմի միջոցը** ներառում է սույն համաձայնագրի մեկ Կողմի իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների եւ անհատ ձեռնարկատերերի հիմնադրման ու

գործունեության մասով միջոցները սույն համաձայնագրի մյուս Կողմերից ցանկացածի տարածքում.

**ծառայության մենաշնորհային մատակարար**՝ Կողմի ցանկացած պետական կամ մասնավոր անձ, որը Կողմի համապատասխան ծառայության շուկայում պաշտոնապես լիազորված կամ փաստացիորեն ստեղծված է որպես Կողմի տարածքում այդ ծառայության միակ մատակարար.

**ծառայությունների մատակարար**՝ Կողմի ցանկացած անձ, որը մատակարարում է ծառայությունը.

**ծառայության սպառող**՝ Կողմի ցանկացած անձ, որն ստանում է ծառայությունը կամ օգտվում է դրանից.

**թույլտվություն**՝ Կողմի օրենսդրությամբ նախատեսված՝ ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության համար անձի իրավունքի՝ Կողմի իրավասու մարմնի կողմից հաստատումը

**ազատ օգտագործվող արժույթ**՝ նշանակում է ազատ օգտագործվող արժույթ՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի սահմանման՝ ԱՄՀ-ի մասին համաձայնագրի հոդվածներին համապատասխան.

**ծառայության ոլորտը** սահմանվում եւ դասակարգվում է 1991 թվականին Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված՝ հիմնական մթերքի միջազգային դասակարգչի (Central Products Classification) հիման վրա եւ նշանակում է՝

ա) անհատական պարտավորության մասով՝ այդ ծառայության մեկ կամ մի քանի կամ բոլոր ենթաոլորտները, ինչպես սահմանված է Կողմի ցանկի մեջ,

բ) մյուս առումներով՝ այդ ծառայության ամբողջ ոլորտը՝ ներառյալ դրա բոլոր ենթաոլորտները.

**ԱՄՀ համաձայնագրի հոդվածներ՝** Արժույթի միջազգային հիմնադրամի 1944 թվականի հուլիսի 22-ի համաձայնագրի հոդվածներ.

**Կողմի տարածք՝** Կողմի տարածքը, ինչպես նաեւ՝ դրա այն տարածությունները, որոնց նկատմամբ Կողմն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ եւ իրավազորություն՝ միջազգային իրավունքին եւ իր օրենսդրությանը համապատասխան

**տնտեսական նպատակահարմարության ստուգում՝** հիմնադրման, գործունեության կամ ծառայությունների առեւտրի համար թույլտվության տրամադրում՝ կախված անհրաժեշտությունից եւ շուկայի պահանջարկից, կոնկրետ ճյուղի տնտեսական պլանավորման նպատակներին կամ աշխատանքի ազգային շուկայի

շահերին համապատասխանության մասով ծառայությունների մատակարարի գործունեության արդյունավետության տնտեսական գնահատման միջոցով, եթե դա նախատեսված է ազգային օրենսդրությամբ: Աշխատանքի ազգային շուկայի շահերին համապատասխանությունը որոշվում է այդտեղ Կողմի՝ ծառայությունների մատակարարի պահանջները բավարարող ֆիզիկական անձանց բացակայությունն ստուգելու միջոցով

**ծառայությունների առեւտուր՝** ծառայությունների մատակարարում, որը ներառում է ծառայությունների արտադրությունը, բաշխումը, շուկայահանումը, վաճառքը, մատուցումը եւ իրականացվում է հետեւյալ եղանակներով՝

ա) մի Կողմի տարածքից ցանկացած այլ Կողմի տարածք,

բ) մի Կողմի տարածքում՝ ցանկացած այլ Կողմի ծառայությունների սպառողին,

գ) մի Կողմի ծառայությունների մատակարարի կողմից՝ ցանկացած այլ Կողմի տարածքում Կողմի ֆիզիկական անձանց ներկայության միջոցով

**պետական իշխանության գործառույթների կատարման ժամանակ մատակարարվող ծառայություն՝** ցանկացած ծառայություն, որը մատակարարվում է ոչ առեւտրային հիմունքներով եւ ոչ ծառայությունների մեկ կամ մի քանի մատակարարների հետ մրցակցության պայմաններով.

**ծառայությունները** ներառում են ցանկացած ծառայություն ցանկացած ոլորտում՝ բացառությամբ պետական իշխանության գործառույթների կատարման ժամանակ մատակարարվող ծառայությունների

**հիմնադրում՝**

ա) ցանկացած կազմակերպաիրավական ձեւի եւ սեփականության ձեւի իրավաբանական անձի ստեղծում, կազմակերպում եւ (կամ) ձեռքբերում (ստեղծված կամ հիմնադրված իրավաբանական անձի կապիտալում մասնակցություն)՝ նախատեսված այն Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում այդ իրավաբանական անձն ստեղծվում է,

բ) Կողմի իրավաբանական անձի նկատմամբ հսկողության ձեռքբերում, որն արտահայտվում է այդ իրավաբանական անձի կողմից ընդունվող որոշումներն անմիջականորեն կամ երրորդ անձանց միջոցով սահմանելու եւ (կամ) դրանց վրա ազդելու հնարավորություն ստանալով, այդ թվում՝ քվեարկող բաժնետոմսերին (մասնաբաժիններին) բաժին ընկնող ձայների տնօրինման, այդ իրավաբանական անձի կառավարման մարմիններում (ներառյալ տնօրենների խորհուրդը, դիտորդ խորհուրդը եւ կառավարման այլ մարմիններ) մասնակցության միջոցով կամ,

գ) Կողմերի օրենսդրությանը համապատասխան՝ մասնաճյուղի ստեղծում կամ

ներկայացուցչության բացում

դ) Կողմերի օրենսդրությանը համապատասխան՝ որպես անհատ ձեռնարկատեր գրանցում.

**ֆիզիկական անձ՝** Կողմի քաղաքացի՝ դրա օրենսդրությանը համապատասխան

**իրավաբանական անձ՝** Կողմի տարածքում այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան ցանկացած կազմակերպաիրավական ձեւով ստեղծված կամ հիմնադրված կազմակերպություն:

Կողմերի անհատական ցանկերում գործածվող այլ եզրույթներ եւ սահմանումներ սահմանվում են համապատասխան Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան:

## ԳԼՈՒԽ I

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Հոդված 2

### Ներքին կարգավորումը

1. Սույն հոդվածի նպատակներով գործունեության տեսակներում եւ ոլորտներում ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության վրա ազդող Կողմերի միջոցներ ասելով՝ պետք է հասկանալ լիցենզային պահանջները եւ ընթացակարգերը, ինչպես նաեւ որակավորման պահանջները եւ ընթացակարգերը:

2. Կողմերի այն միջոցների համար, որոնք ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության վրա ազդում են գործունեության այն ոլորտներում եւ տեսակներում, որոնց մասով ստանձնվել են պարտավորություններ կամ չկան բացառումներ՝ սույն համաձայնագրի Բ, Գ եւ Դ հավելվածներում Կողմերի անհատական ցանկերին համապատասխան՝

ա) յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության վրա ազդող այդ Կողմի ցանկացած միջոց կիրառվի ողջամիտ, օբյեկտիվ եւ անկողմնակալ կերպով,

բ) ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության համար թույլտվություն պահանջվելու դեպքում Կողմի իրավասու մարմինները տվյալ Կողմի օրենսդրության պահանջներին համապատասխան ձեւակերպված համարվող դիմումի ներկայացումից հետո ողջամիտ ժամանակահատվածում դիմումատուին տեղեկացնում

են դիմումի վերաբերյալ որոշման մասին: Կողմի իրավասու մարմինները դիմումատուի հարցման հիման վրա դիմումի ուսումնասիրության ընթացքի մասին տեղեկատվությունը տրամադրում են ողջամիտ ժամկետներում եւ ազգային օրենսդրությամբ նախատեսված ժամկետից ոչ ուշ,

գ) Կողմերը չեն կիրառում լիցենզային կամ որակավորման պահանջներ, որոնցով չեղյալ են համարվում կամ կրճատվում են սույն համաձայնագրի Բ եւ Գ հավելվածներում ներառված պայմանների համաձայն ներկայացված օգուտներն այնպիսի եղանակով, որը՝

չի հիմնվում այնպիսի օբյեկտիվ եւ թափանցիկ չափորոշիչների վրա, ինչպիսիք են ծառայությունը մատակարարելու կոմպետենտությունը եւ կարողությունը,

լիցենզավորման ընթացակարգերի դեպքում ինքնին չի եղել ծառայության մատակարարման սահմանափակում,

չի եղել ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակի ապահովման համար:

Եթե Կողմերի անհատական ցանկերին համապատասխան սույն համաձայնագրի Բ եւ Գ հավելվածներում ներառվել են պարտավորություններ (բացակայում են բացառումներ) մասնագիտական ծառայությունների մասով, ապա յուրաքանչյուր Կողմ իր օրենսդրությանը համապատասխան իրականացնում է ընթացակարգեր ցանկացած այլ Կողմի մասնագետների կոմպետենտությունն ստուգելու համար:

3. Ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության վրա ազդող՝ Կողմերի միջոցների առնչությամբ՝

3.1. Եթե Կողմը կիրառում է լիցենզավորման ընթացակարգեր եւ պահանջներ (թույլատրական ընթացակարգեր), ապա այդ Կողմն ապահովում է, որ՝

ա) հրապարակվեն գործունեության իրականացման համար լիցենզիաների (թույլտվությունների) տրամադրման համար պատասխանատու իշխանության իրավասու մարմինների անվանումները կամ այլ կերպ տեղեկացվի դրանց մասին,

բ) լիցենզային (թույլատրական) ընթացակարգերն ինքնին սահմանափակում չլինեն ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության համար եւ որ լիցենզային (թույլատրական) պահանջները, որոնք անմիջականորեն կապված են ծառայությունների առեւտրի կամ գործունեության իրականացման իրավունքի հետ, ինքնին անհիմն խոչընդոտ չլինեն ծառայությունների առեւտրի կամ գործունեության համար,

գ) լիցենզային բոլոր ընթացակարգերը եւ պահանջները սահմանված լինեն օրենսդրության մեջ եւ, լիցենզային ընթացակարգեր կամ պահանջներ սահմանող կամ

կիրառող օրենսդրությունը հրապարակվի նախորոք, սակայն դրա ուժի մեջ մտնելուց (գործողության մեջ դրվելուց) ոչ ուշ՝ սույն համաձայնագրի 4-րդ հոդվածի դրույթներին համապատասխան,

դ) իրավասու մարմինները լիցենզիայի (թույլտվության) տրամադրման (տրամադրումը մերժելու) մասին որոշում ընդունեն համապատասխան օրենսդրական ակտում սահմանված ժամանակահատվածի ընթացքում, իսկ լիցենզիայի (թույլտվության) տրամադրման համար դիմումի ներկայացման եւ ուսումնասիրման հետ կապված գանձվող ցանկացած վճար համապատասխանի օրենսդրությանը եւ ինքնին չլինի ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության համար սահմանափակում եւ հիմնվի լիցենզիայի (թույլտվության) տրամադրման (տրամադրումը մերժելու) համար դիմումի ուսումնասիրման եւ լիցենզիայի (թույլտվության) տրամադրման հետ կապված լիազորված մարմնի ծախսերի վրա՝ բացառությամբ ռադիոհաճախականության տիրույթի եւ համարագրման ռեսուրսների օգտագործման համար լիցենզային վճարների, որոնց չափը սահմանվում է ազգային օրենսդրությամբ,

ե) սույն կետի «դ» ենթակետում նշված ժամանակահատվածը լրանալուց հետո եւ դիմումատուի պահանջով՝ Կողմի համապատասխան իրավասու մարմինը դիմումատուին տեղեկացնի նրա դիմումի ուսումնասիրման ընթացքի մասին, ինչպես նաեւ այն մասին, թե արդյոք այդ դիմումը պատշաճ ձեւակերպված է համարվում: Ցանկացած դեպքում դիմումատուին կտրվի դիմումի մեջ տեխնիկական ուղղումներ կատարելու հնարավորություն: Դիմումը չի համարվի պատշաճ լրացված այնքան ժամանակ, քանի դեռ չեն ստացվել Կողմի համապատասխան օրենսդրական ակտում նշված ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը,

զ) այն դիմումատուի գրավոր պահանջով, որի դիմումի ընդունումը մերժվել է, դիմումի ընդունումը մերժած իրավասու մարմինը դիմումատուին գրավոր տեղեկացնի այդ մերժման պատճառների մասին: Սակայն այդ դրույթը չպետք է մեկնաբանվի որպես այն տեղեկատվությունը բացահայտելու մասին իրավասու մարմին ներկայացվող պահանջ, որի բացահայտումը խոչընդոտում է օրենքի կատարումը կամ այլ կերպ հակասում է հանրային շահերին կամ անվտանգության էական շահերին,

է) եթե մերժվել է դիմումի ընդունումը, ապա դիմումատուն կարողանա ներկայացնել նոր դիմում՝ լիցենզիայի (թույլտվության) տրամադրման մասին կամ հին դիմումի մեջ կատարել այնպիսի փոփոխություններ, որոնցով կվերացվի լիցենզիայի (թույլտվության) տրամադրման համար գոյություն ունեցած ցանկացած խնդիր:

3.2. Յուրաքանչյուր Կողմ պահպանում կամ գործնականորեն հնարավորինս արագ ստեղծում է դատական, արբիտրաժային կամ վարչական մարմիններ կամ ընթացակարգեր, որոնք ծառայությունների մատակարարի կամ այն անձի հարցման

դեպքում, որի շահերը շոշափվում են, ապահովվում են ծառայությունների առեւտրին, հիմնադրմանը եւ գործունեությանն առնչվող վարչական որոշումների անհապաղ ուսումնասիրությունն ու հիմնավորված լինելու դեպքում՝ դրանց պատշաճ շտկումը: Այն դեպքերում, երբ նշված ընթացակարգերը կախված չեն նման վարչական որոշումներ ընդունելու համար լիազորված մարմնից, Կողմն ապահովում է նշված հարցերի օբյեկտիվ եւ անկողմնակալ ուսումնասիրությունն այդպիսի ընթացակարգերի շրջանակներում:

4. Ֆինանսական ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները նախատեսված են սույն համաձայնագրի Ե հավելվածով:

5. Հեռահաղորդակցական ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները նախատեսված են սույն համաձայնագրի Զ հավելվածով:

## Հոդված 3

## Ճանաչումը

1. Ծառայությունների մատակարարների թույլտվությունների, լիցենզավորման կամ սերտիֆիկացման, ինչպես նաեւ հիմնադրման եւ գործունեության հետ կապված իր համապատասխան ստանդարտների կամ չափորոշիչների կատարման համար յուրաքանչյուր Կողմ պարտավոր է պատշաճ կերպով ուսումնասիրել մյուս Կողմի ցանկացած հարցում՝ ստացած կրթության կամ ձեռք բերած փորձի, պահանջներին համապատասխանության, մյուս Կողմի տրամադրած լիցենզիաների (թույլտվությունների) կամ սերտիֆիկատների ճանաչման մասին: Այդ ճանաչումը կարող է իրականացվել մյուս Կողմի հետ համաձայնության կամ պայմանավորվածության հիման վրա կամ տրամադրվել Կողմի որոշմամբ՝ միակողմանիորեն:

2. Եթե Կողմը համաձայնության կամ պայմանավորվածության հիման վրա ճանաչում է երրորդ Կողմի տարածքում ստացած կրթությունը կամ ձեռք բերած փորձը, պահանջներին համապատասխանությունը կամ ստացած լիցենզիաները (թույլտվությունները) կամ սերտիֆիկատները, ապա այդ առաջին Կողմը պետք է ցանկացած այլ Կողմի տրամադրի այդ համաձայնությանը կամ պայմանավորվածությանը վերջինիս կողմից միանալու վերաբերյալ բանակցություններ վարելու հնարավորություն կամ համադրելի համաձայնություններ կամ պայմանավորվածություններ կնքելու վերաբերյալ բանակցություններ վարելու հնարավորություն: Եթե Կողմը ճանաչումն իրականացնում է միակողմանի կարգով, ապա նա ցանկացած այլ Կողմի տրամադրում է համապատասխան հնարավորություն՝ ցույց տալու, որ վերջինիս տարածքում ստացած կրթությունը, ձեռք բերած փորձը,

լիցենզիաները (թույլտվությունները) եւ սերտիֆիկատները պետք է ճանաչվեն Կողմերի օրենսդրությանը համապատասխան:

3. Ճանաչումը պետք է տրամադրվի այնպես, որ դա չդառնա ծառայությունների մատակարարների թույլտվությունների, նրանց լիցենզավորման կամ սերտիֆիկացման ստանդարտների կամ չափորոշիչների կիրառման հարցում Կողմերի միջեւ խտրականության միջոց կամ ծառայությունների առեւտրի, ինչպես նաեւ հիմնադրման եւ գործունեության համար թաքնված սահմանափակում:

## Հոդված 4

## Թափանցիկությունը

1. Յուրաքանչյուր Կողմ կապահովի, որ իր օրենսդրական ակտերը եւ միջազգային համաձայնագրերը, որոնց մասնակիցն է նա, եւ որոնք շոշափում են կամ կարող են շոշափել սույն համաձայնագրում ներառված հարցեր, հրապարակվեն պաշտոնական աղբյուրում եւ (կամ) Կողմի կողմից սահմանվող ինտերնետ կայքում այնպես, որ յուրաքանչյուր անձ, որի իրավունքները եւ (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Կողմի այդ օրենսդրական ակտերով եւ միջազգային համաձայնագրերով, ունենա դրանց հետ ծանոթանալու հնարավորություն:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված օրենսդրական ակտերը պետք է հրապարակվեն անհապաղ, այն անձանց իրավական որոշակիությունը եւ հիմնավորված ակնկալիքներն ապահովող ժամկետում, որոնց իրավունքները եւ (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել այդ օրենսդրությամբ, սակայն ցանկացած դեպքում՝ ոչ ուշ, քան դրա ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դնելու) օրը:

Եթե այդ հրապարակումը գործնականում անիրագործելի է, սույն հոդվածի 1-ին կետում նշված օրենսդրական ակտերը հանրայնացվում են այլ կերպ, ինչպես նախատեսված է ազգային օրենսդրությամբ:

3. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է սույն համաձայնագրում ընդգրկված հարցերի մասով գործող եւ (կամ) պլանավորվող օրենսդրական ակտին առնչվող՝ ցանկացած անձի գրավոր հարցումներին պատասխանների տրամադրումը: Հարցումներին տրվող պատասխաններն այդ շահագրգիռ անձին պետք է տրամադրվեն Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան, սակայն գրավոր հարցումն ստանալու օրվանից հետո 30 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում: Բացառիկ դեպքերում Կողմը շահագրգիռ անձին ծանուցում է սահմանված ժամկետը երկարաձգելու մասին:

## Հոդված 5

## Գաղտնի տեղեկատվության բացահայտումը

1. Սույն համաձայնագրում ոչնչով որեւէ Կողմից չի պահանջվում տրամադրել այնպիսի գաղտնի տեղեկատվություն, որի բացահայտումը կարող էր խոչընդոտել նրա կողմից իր ազգային օրենսդրության կիրառումը կամ այլ կերպ հակասել հանրային շահերին կամ վնաս հասցնել առանձին իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի օրինական առեւտրային շահերին:

2. Ֆինանսական ծառայությունների ոլորտում գաղտնի տեղեկատվության բացահայտումը կարգավորվում է սույն համաձայնագրի Ե հավելվածով:

## Հոդված 6

## Ծառայությունների մենաշնորհային եւ բացառիկ մատակարարները

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ծառայության ցանկացած մենաշնորհային մատակարար ծառայության մենաշնորհային մատակարարման եւ (կամ) համապատասխան շուկայում այլ մենաշնորհային գործունեության իրականացման դեպքում չգործի այնպիսի եղանակով, որն անհամատեղելի է սույն համաձայնագրի II, III, IV գլուխների համաձայն այդ Կողմի պարտավորությունների հետ:

2. Եթե մի Կողմի տարածքում ծառայության մենաշնորհային մատակարար հանդիսացող իրավաբանական անձն իր մենաշնորհային իրավունքների ոլորտից դուրս ուղղակիորեն կամ իր կողմից վերահսկվող իրավաբանական անձի միջոցով մրցակցում է մյուս Կողմերի անձանց հետ, ապա առաջին Կողմն ապահովում է, որ իր այդ իրավաբանական անձը չչարաշահի իր մենաշնորհային դիրքը՝ առաջին Կողմի տարածքում գործելով այդ առաջին Կողմի՝ սույն համաձայնագրով ստանձնած պարտավորությունների հետ անհամատեղելի կերպով:

3. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են նաեւ ծառայությունների բացառիկ մատակարարների նկատմամբ:

## Հոդված 7

## Հավասարության սկզբունքը

1. Կողմի տարածքում այնպիսի անձանց պահպանելու դեպքում, որոնց

կապիտալում այդ Կողմը մասնակցում է կամ որոնց այդ Կողմը վերահսկում է, այդ Կողմն ապահովում է, որ նշված անձինք՝

ա) իրենց գործունեությունն իրականացնեն առեւտրային նկատառումների հիման վրա՝ ներառյալ ծառայության կամ ապրանքի գինը, որակը, հասանելիությունը, դրանց իրացվելիությունը, փոխադրման պայմանները եւ գնման, վաճառքի կամ մատակարարման այլ պայմաններ, եւ սույն համաձայնագրով կարգավորվող հարաբերություններում հանդես գան

այդ հարաբերությունների այլ մասնակիցների հետ հավասարության սկզբունքի հիման վրա,

այդ հարաբերությունների այլ մասնակիցների հետ խտրականության բացառման սկզբունքի հիման վրա՝ կախված նրանց քաղաքացիությունից, գրանցման (հիմնադրման) վայրից, կազմակերպաիրավական ձեւից կամ սեփականության ձեւից, ինչպես նաեւ՝

բ) չստանան իրավունքներ, առանձնաշնորհումներ կամ պարտականություններ բացառապես իրենց կապիտալում այդ Կողմի մասնակցության կամ իրենց նկատմամբ այդ Կողմի ունեցած վերահսկողության հիման վրա՝

բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձանց գործունեությունը, որոնց կապիտալում պետությունը մասնակցում է կամ որոնց պետությունը վերահսկում է, ուղղված է սոցիալական քաղաքականության խնդիրների լուծմանը,

ինչպես նաեւ բացառությամբ այն դեպքերի, որոնք նշված են սույն համաձայնագրի Բ եւ Գ հավելվածներում Կողմերի անհատական ցանկերում:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները տարածվում են նաեւ այն անձանց վրա, որոնք ֆորմալ կամ փաստացի կերպով օժտված են բացառիկ իրավունքներով՝ բացառությամբ այն անձանց, որոնք օժտված են բացառիկ իրավունքներով եւ սույն համաձայնագրի Բ եւ Գ հավելվածներում Կողմերի անհատական ցանկերում ներառված են սույն համաձայնագրի 21-րդ հոդվածի 1-ին կետի «բ» եւ «գ» ենթակետերի հիման վրա, եւ այն անձանց, որոնք օժտված են մենաշնորհային իրավունքներով՝ սույն համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան:

3. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ իր բոլոր մարմինները պետական իշխանության կամ տեղական ինքնակառավարման ցանկացած մակարդակով լինեն անկախ, չվերահսկվեն որեւէ անձի կողմից եւ հաշվետու չլինեն որեւէ անձի, որը տնտեսական գործունեություն է իրականացնում տնտեսության այնպիսի ոլորտում, որի կարգավորումը համապատասխան մարմնի իրավասության մեջ է մտնում: Կողմի միջոցները, այդ թվում՝ սույն կետում նշված մարմնի որոշումները, նրա կողմից սահմանվող եւ կիրառվող կանոններն ու ընթացակարգերը պետք է լինեն

անկողմնակալ եւ օբյեկտիվ տնտեսական գործունեություն իրականացնող բոլոր անձանց նկատմամբ:

4. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում պետական գնումների վրա եւ պետական իշխանության գործառույթների կատարման ժամանակ մատուցվող ծառայությունների վրա:

## Հոդված 8

## Սահմանափակումները կամ արգելքները

1. Եթե Կողմերից մեկը երրորդ պետության նկատմամբ պահպանում է հիմնադրման, գործունեության, ծառայությունների առեւտրի կամ ներդրումների իրականացման մասով սահմանափակումները կամ արգելքները, ապա սույն համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես պարտավորեցնող այդ Կողմին՝ մյուս Կողմի անձանց վրա տարածելու սույն համաձայնագրի դրույթները, եթե այդ անձն ամբողջությամբ պատկանում է նշված երրորդ պետության անձին կամ վերահսկվում է նրա կողմից, իսկ սույն համաձայնագրի դրույթների տարածումը կհանգեցնի վերոնշյալ արգելքների եւ սահմանափակումների շրջանցմանը կամ խախտմանը:

2. Կողմը կարող է սույն համաձայնագրին համապատասխան ստանձնվող իր պարտավորությունները չտարածել մյուս Կողմի անձանց վրա՝ հիմնադրման, գործունեության, ծառայությունների առեւտրի կամ ներդրումների իրականացման առնչությամբ, եթե մյուս Կողմի այդպիսի անձը այդ մյուս Կողմի տարածքում չի իրականացնում էական բիզնես գործառնություններ, եւ նա պատկանում կամ վերահսկվում է առաջին Կողմի անձի կամ այն պետության անձի կողմից, որը սույն համաձայնագրի Կողմ չէ:

## Հոդված 9

## Ընդհանուր բացառությունները

Պայմանով, որ նման միջոցները չեն կիրառվի այնպիսի եղանակով, որը պետությունների միջեւ կամայական կամ չարդարացված խտրականություն կամ ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության, ներդրումների իրականացման համար թաքնված սահմանափակումներ է առաջացնում, սույն համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած Կողմի ընդունել կամ կիրառել այնպիսի միջոցներ, որոնք՝

ա) անհրաժեշտ են հասարակության բարոյականության պաշտպանության կամ

հասարակական կարգի պահպանման համար: Հասարակական կարգի նկատառումներից ելնելով՝ բացառությունները կարող են կիրառվել միայն այն դեպքերում, երբ հասարակության հիմնարար շահերից որեւէ մեկի նկատմամբ իրական եւ բավականին լուրջ սպառնալիք է առաջանում.

բ) անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար.

գ) անհրաժեշտ են Կողմերի՝ սույն համաձայնագրի դրույթներին չհակասող օրենսդրության պահպանման համար՝ ներառյալ այնպիսիք, որոնք առնչվում են՝

մոլորեցնող եւ անբարեխիղճ գործելակերպի կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի խախտման հետեւանքների կանխարգելմանը,

անձնական բնույթի տեղեկությունների մշակման եւ տարածման ժամանակ առանձին անձանց մասնավոր կյանքին միջամտելուց պաշտպանությանը եւ անձնական կյանքի ու բանկային հաշիվների մասին տեղեկությունների գաղտնիության պաշտպանությանը,

անվտանգությանը

դ) անհամատեղելի են սույն համաձայնագրի 15-րդ, 20-րդ, 25-րդ եւ 30-րդ հոդվածների հետ՝ պայմանով, որ այդ միջոցներն ուղղված են ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության մասով մյուս Կողմի անձանց ոչ խտրական հարկմանը:

## Հոդված 10

## Անվտանգության նկատառումներից ելնելով արված բացառությունները

1. Սույն համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ որեւէ Կողմի համար՝ ցանկացած այնպիսի գործողություն նախաձեռնելու հարցում, որն այդ Կողմն անհրաժեշտ է համարում երկրի պաշտպանության կամ պետության անվտանգության բնագավառում իր կարեւորագույն շահերի պաշտպանության համար, եւ որը

ա) առնչվում է այն ծառայությունների կամ ապրանքների մատակարարմանը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացվում են զինված ուժերի մատակարարման համար,

բ) առնչվում է միջուկային կամ ջերմամիջուկային ռազմամթերքին կամ այն նյութերին, որոնցից դրանք ստացվել են,

գ) նախաձեռնվել են պատերազմի ժամանակ կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակներում:

2. Սույն համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես այնպիսի տեղեկատվություն տրամադրելու պահանջ, որի բացահայտումը Կողմը դիտարկում է որպես իր անվտանգության կարեւորագույն շահերին հակասող:

3. Սույն համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանման կամ վերականգնման համար ցանկացած Կողմի՝ ՄԱԿ-ի Կանոնադրությանը համապատասխան իր պարտավորությունների կատարմանն ուղղված ցանկացած գործողություն նախաձեռնելու խոչընդոտ:

**Հոդված 11**

**Վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով սահմանափակումները**

1. Վճարային հաշվեկշռի վիճակի էական վատթարացման, արտաքին ֆինանսական դժվարությունների, ոսկու եւ արժույթի պաշարների էական կրճատման, ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ տատանումների կամ դրանց վտանգի դեպքում Կողմը կարող է ընդունել եւ կիրառել սահմանափակումներ՝ փոխանցումների եւ վճարումների առնչությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված սահմանափակումները՝

ա) չպետք է Կողմերի միջեւ խտրականություն ստեղծեն,

բ) պետք է համապատասխանեն ԱՄՀ-ի համաձայնագրի հոդվածներին,

գ) չպետք է չափից ավելի վնաս հասցնեն ցանկացած այլ Կողմի առեւտրային, տնտեսական եւ ֆինանսական շահերին,

դ) չպետք է լինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքները հաղթահարելու համար,

ե) պետք է լինեն ժամանակավոր եւ աստիճանաբար վերացվեն՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների վերացմանը զուգընթաց:

3. Այդ սահմանափակումների գործողության ոլորտը որոշելիս Կողմերը կարող են նախապատվությունը տալ տնտեսության այն ոլորտներին, որոնք առավել կարեւոր են իրենց տնտեսական ծրագրերի կամ զարգացման ծրագրերի համար: Սակայն այդ սահմանափակումները չեն սահմանվում եւ չեն պահպանվում տնտեսության որոշակի ոլորտի պաշտպանության համար:

4. Կողմի սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան սահմանած ցանկացած սահմանափակման եւ դրա ցանկացած փոփոխության մասին պետք է անհապաղ ծանուցվի մյուս Կողմերին եւ ԱՊՀ Գործադիր կոմիտեին՝ այդ սահմանափակումների սահմանման/փոփոխման օրվանից 15 օրացուցային օրվանից ոչ ուշ:

## Հոդված 12

## Վճարումները եւ փոխանցումները

1. Բացառությամբ սույն համաձայնագրի 11-րդ հոդվածում նախատեսված հանգամանքների՝ Կողմերը չեն կիրառում սահմանափակումներ ընթացիկ գործարքների գծով միջազգային փոխանցումների եւ վճարումների համար, որոնք առնչվում են նրանց պարտավորությունների անհատական ցանկերին:

2. Սույն համաձայնագրում ոչինչ չի առնչվում ԱՄՀ համաձայնագրի հոդվածներին համապատասխան Արժույթի միջազգային հիմնադրամի անդամ հանդիսացող Կողմերի իրավունքներին ու պարտավորություններին՝ ներառյալ այն արժութային գործառնությունների կատարումը, որոնք համատեղելի են ԱՄՀ համաձայնագրի հոդվածների հետ՝ պայմանով, որ Կողմը չի սահմանում սահմանափակումներ կապիտալի հետ կատարվող այնպիսի գործառնությունների համար, որոնք անհամատեղելի են այդ գործառնություններին առնչվող իր անհատական պարտավորությունների հետ՝ բացառությամբ սույն համաձայնագրի 11-րդ հոդվածում նշված դեպքերի, կամ Արժույթի միջազգային հիմնադրամի խնդրանքով:

# ԳԼՈՒԽ II

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

## Հոդված 13

## Կիրառության ոլորտը

1. Սույն գլխի դրույթները կիրառվում են Կողմերի այն միջոցների նկատմամբ, որոնք ազդում են ծառայությունների անդրսահմանային առեւտրի վրա, որն իրականացվում է՝

ա) մի Կողմի տարածքից ցանկացած այլ Կողմի տարածք,

բ) մի Կողմի տարածքում՝ ցանկացած այլ Կողմի ծառայությունների սպառողին:

2. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում՝

ա) օդային տրանսպորտով փոխադրումների իրավունքներին առնչվող միջոցների նկատմամբ՝ անկախ դրանց ներկայացված լինելու ձեւից, եւ (կամ) այն ծառայությունների նկատմամբ, որոնք անմիջականորեն առնչվում են օդային տրանսպորտով փոխադրումների իրավունքներին՝ բացի

օդանավերի վերանորոգման եւ շահագործման (տեխնիկական) սպասարկումից,

ավիատրանսպորտային ծառայությունների վաճառքից եւ մարքեթինգից,

ամրագրման համակարգչային համակարգի ծառայություններից.

բ) ԾԱԳՀ-ի XIII հոդվածին համապատասխան՝ որպես այդպիսին ընկալվող պետական գնումների նկատմամբ,

գ) այն ծառայությունների նկատմամբ, որոնք մատուցվում են պետական իշխանության գործառույթների կատարման ժամանակ:

դ) սուբսիդիաների եւ պետական ու մունիցիպալ օժանդակության այլ ձեւերի նկատմամբ:

3. Ֆինանսական ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները նախատեսված են սույն համաձայնագրի Ե հավելվածով:

4. Հեռահաղորդակցական ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները նախատեսված են սույն համաձայնագրի Զ հավելվածով:

## Հոդված 14

## Առավել բարենպաստության ռեժիմը

1. Սույն գլխում ընդգրկված ցանկացած միջոցի մասով սույն համաձայնագրի յուրաքանչյուր Կողմ սույն համաձայնագրի ցանկացած այլ Կողմի ծառայությունների եւ ծառայությունների մատակարարների համար տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա տրամադրում է սույն համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության համանման ծառայությունների եւ ծառայությունների մատակարարների համար՝ բացառությամբ այն միջոցների, որոնք նախատեսված են սույն համաձայնագրի Ա հավելվածում այդ Կողմի անհատական ցանկով:

2. Սույն համաձայնագրի դրույթները Կողմերին չեն խոչընդոտում սահմանակից երկրներին տրամադրել առավելություններ այն ծառայությունների

միջսահմանային առեւտուրը դյուրացնելու նպատակով, որոնք տեղական մակարդակով արտադրվում եւ սպառվում են Կողմերից յուրաքանչյուրի սահմաններին հարակից տարածքներում:

3. Սույն համաձայնագրի որեւէ դրույթով չեն ենթադրվում այնպիսի պարտավորություններ, որոնց համաձայն, Կողմը մյուս Կողմերի ծառայությունների եւ (կամ) ծառայությունների մատակարարների համար տրամադրում է օգուտներ կամ առավելություններ, որոնք այդ Կողմը տրամադրում է կամ կտրամադրի՝

ա) ԾԱԳՀ-ի V հոդվածի պահանջներին համապատասխանող՝ տնտեսական ինտեգրման, ծառայությունների ազատ առեւտրի մասին, ընդլայնված գործընկերության ու համագործակցության եւ այլնի մասին այդ Կողմի համաձայնագրերին համապատասխան, կամ

բ) կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերի կամ հարկային հարցերով այլ պայմանավորվածությունների հիման վրա:

## Հոդված 15

## Ազգային ռեժիմը

1. Սույն համաձայնագրի Բ հավելվածում Կողմերի անհատական ցանկերով նախատեսված ոլորտներում եւ դրանց մեջ սահմանված պայմաններին ու սահմանափակումներին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ ծառայությունների անդրսահմանային առեւտրի վրա ազդող ցանկացած միջոցի առնչությամբ ցանկացած մյուս Կողմի ծառայությունների մատակարարների եւ ծառայությունների համար տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա տրամադրում է իր սեփական համանման ծառայությունների եւ ծառայությունների մատակարարների համար:

2. Կողմերը սույն հոդվածի 1-ին կետի պահանջները կարող են կատարել ցանկացած այլ Կողմի ծառայությունների մատակարարների եւ ծառայությունների համար կամ ֆորմալ առումով նույնպիսի (համանման) ռեժիմի, կամ ֆորմալ առումով այն ռեժիմի համեմատ այլ ռեժիմի տրամադրման միջոցով, որը տրամադրվում է իր սեփական համանման ծառայությունների կամ ծառայությունների մատակարարների համար:

3. Ֆորմալ առումով նույնպիսի (համանման) ռեժիմը կամ ֆորմալ առումով տարբերվող ռեժիմը համարվում է պակաս բարենպաստ, եթե դրանով մրցակցության պայմանները փոխվում են հօգուտ այդ Կողմի ծառայությունների կամ ծառայությունների մատակարարների՝ ցանկացած այլ Կողմի համանման

ծառայությունների կամ ծառայությունների մատակարարների հետ համեմատած:

## Հոդված 16

## Շուկայի հասանելիությունը

Սույն համաձայնագրի Բ հավելվածում Կողմերի անհատական ցանկերով նախատեսված ոլորտներում եւ դրանց մեջ սահմանված պայմաններին ու սահմանափակումներին համապատասխան՝ Կողմերից ոչ մեկը ծառայությունների անդրսահմանային առեւտրի մասով մյուս Կողմի ծառայությունների եւ (կամ) ծառայությունների մատակարարների նկատմամբ չի կիրառում եւ չի սահմանում՝

ա) ծառայությունների մատակարարների թվի համար սահմանափակումներ՝ քանակական քվոտաների, մենաշնորհների, ծառայությունների բացառիկ մատակարարների կամ տնտեսական նպատակահարմարության ստուգման հաստատման պահանջների ձեւով.

բ) ծառայությունների ցանկացած մատակարարի ծառայությունների մատակարարման գծով գործառնությունների ընդհանուր թվի կամ ծառայությունների արտադրության ընդհանուր ծավալի համար սահմանափակումներ՝ արտահայտված չափումների սահմանված քանակական միավորների տեսքով՝ քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման կամ ցանկացած այլ քանակական տեսքով

գ) ակտիվների կամ ծառայությունների գծով գործարքների ընդհանուր արժեքի սահմանափակումներ՝ քանակական քվոտաների կամ տնտեսական նպատակահարմարության ստուգման պահանջների ձեւով.

դ) հիմնադրմանը, ինչպես նաեւ հաստատության կազմակերպաիրավական ձեւին ներկայացվող պահանջներ:

Եթե Կողմն ստանձնում է մի Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք ծառայության մատակարարման համար շուկայի հասանելիության վերաբերյալ պարտավորություն, եւ եթե կապիտալի անդրսահմանային շարժը հենց այդ ծառայության էական մասն է կազմում, ապա այդ Կողմը պարտավորվում է դրա հետ կապված թույլատրել կապիտալի նշված շարժը:

## Հոդված 17

## Լրացուցիչ պարտավորությունները

Միջոցները, որոնք ենթակա չեն սույն համաձայնագրի 15-րդ եւ 16-րդ

հոդվածներին համապատասխան պարտավորությունների ցանկերում ներառման, այդ թվում՝ այնպիսիք, որոնք առնչվում են որակավորման, չափանիշների եւ լիցենզավորման հարցերին, ներառվում են Կողմերի անհատական ցանկերում՝ սույն համաձայնագրի Բ հավելվածի «Լրացուցիչ պարտավորությունները» բաժնում:

## ԳԼՈՒԽ III

## ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

### Հոդված 18

### Կիրառության ոլորտը

1. Սույն գլխի դրույթները կիրառվում են՝

ա) Կողմի ցանկացած միջոցի նկատմամբ, որն ազդում է տվյալ Կողմի տարածքում այլ Կողմի անձանց կողմից հիմնադրման վրա,

բ) Կողմի ցանկացած միջոցի նկատմամբ, որն ազդում է այդ Կողմի տարածքում այլ Կողմի անձանց կողմից հիմնադրված (ստեղծված, բացված) իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, այլ Կողմի տարածքում որպես անհատ ձեռնարկատերեր գրանցված՝ մյուս Կողմի ֆիզիկական անձանց գործունեության վրա՝ սույն համաձայնագրի ամսաթվի դրությամբ եւ այն ուժի մեջ մտնելուց հետո:

2 Սույն գլխի դրույթները չեն կիրառվում Կողմի տարածքում՝

ա) պետական գնումների նկատմամբ, որոնք հասկացվում են ԾԱԳՀ-ի XIII հոդվածին համապատասխան, եւ այն գործունեության նկատմամբ, որը, այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան, կապված է պետական իշխանության գործառույթների կատարման հետ:

բ) սուբսիդիաների եւ պետական ու մունիցիպալ օժանդակության այլ ձեւերի նկատմամբ:

3. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում Կողմի տարածքում այն միջոցների նկատմամբ, որոնք առնչվում են օդային տրանսպորտով փոխադրման իրավունքներին, անկախ նրանից, թե ինչ ձեւով են դրանք ներկայացված, եւ (կամ) այն ծառայությունների նկատմամբ, որոնք անմիջականորեն վերաբերում են օդային տրանսպորտով փոխադրման իրավունքներին, բացի՝

օդանավերի վերանորոգման եւ շահագործման (տեխնիկական) սպասարկումից.

ավիատրանսպորտային ծառայությունների վաճառքից եւ մարքեթինգից.

ամրագրման համակարգչային համակարգի ծառայություններից:

4. Ֆինանսական ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները նախատեսված են սույն համաձայնագրի Ե հավելվածով:

5. Հեռահաղորդակցական ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները նախատեսված են սույն համաձայնագրի Ջ հավելվածով:

### Հոդված 19

### Առավել բարենպաստության ռեժիմը

1. Սույն գլխում ընդգրկված ցանկացած միջոցի հետ կապված՝ յուրաքանչյուր Կողմ ցանկացած այլ Կողմի անձանց հիմնադրման եւ գործունեության համար անհապաղ եւ անվերապահորեն տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա տրամադրում է սույն համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության անձանց՝ բացառությամբ այն միջոցների, որոնք նախատեսված են սույն համաձայնագրի Ա հավելվածում Կողմերից յուրաքանչյուրի անհատական ցանկով:

2. Սույն համաձայնագրի դրույթները Կողմերին չեն խոչընդոտում սահմանակից երկրներին տրամադրել առավելություններ՝ մերձսահմանային տարածքների սահմաններում այդ տարածքների շրջանակներում հիմնադրումը եւ (կամ) գործունեությունը դյուրացնելու նպատակով:

3. Սույն համաձայնագրի որեւէ դրույթով չեն ենթադրվում այնպիսի պարտավորություններ, որոնց համաձայն, Կողմը մյուս Կողմերի անձանց հիմնադրման եւ գործունեության համար տրամադրում է օգուտներ կամ առավելություններ, որոնք այդ Կողմը տրամադրում է կամ կտրամադրի՝

ա) ԾԱԳՀ-ի V հոդվածին համապատասխանող՝ տնտեսական ինտեգրման, ծառայությունների ազատ առեւտրի, ընդլայնված գործընկերության ու համագործակցության եւ այլնի մասին այդ Կողմի համաձայնագրերին համապատասխան, կամ

բ) կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերի կամ հարկային հարցերով այլ պայմանավորվածությունների հիման վրա:

### Հոդված 20

### Ազգային ռեժիմը

1. Յուրաքանչյուր Կողմ հիմնադրման եւ (կամ) գործունեության համար ցանկացած այլ Կողմի անձանց տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա տրամադրում է իր անձանց իր տարածքում՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի Գ հավելվածում Կողմերից յուրաքանչյուրի

անհատական ցանկերով նախատեսված սահմանափակումներն ու պայմանները:

2. Կողմերը սույն հոդվածի 1-ին կետի պահանջները կարող են կատարել ցանկացած այլ Կողմի անձանց կա՛մ ֆորմալ առումով նույնպիսի (համանման) ռեժիմի, կա՛մ ֆորմալ առումով այն ռեժիմի համեմատ այլ (տարբերվող) ռեժիմի տրամադրման միջոցով, որը տրամադրվում է իրենց անձանց համար:

3. Ֆորմալ առումով նույնպիսի (համանման) ռեժիմը կամ ֆորմալ առումով այլ (տարբերվող) ռեժիմը համարվում է պակաս բարենպաստ, եթե դրանով մրցակցության պայմանները փոխվում են հօգուտ այդ Կողմի անձանց՝ ցանկացած այլ Կողմի անձանց հետ համեմատած:

**Հոդված 21**

**Հիմնադրման եւ գործունեության դեպքում շուկայի հասանելիության հետ կապված սահմանափակումները**

1. Հաշվի առնելով սույն համաձայնագրի Գ հավելվածում Կողմերից յուրաքանչյուրի համար անհատական ցանկով նախատեսված սահմանափակումներն ու պայմանները, Կողմերից որեւէ մեկը հիմնադրման եւ (կամ) գործունեության համար ցանկացած այլ Կողմի անձանց նկատմամբ չի կիրառում եւ չի սահմանում սահմանափակումներ՝

ա) հիմնադրման ձեւի, այդ թվում՝ իրավաբանական եւ ֆիզիկական անձի կազմակերպաիրավական ձեւի մասով.

բ) հիմնադրվող իրավաբանական անձանց, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների թվի, գրանցվող անհատ ձեռնարկատերերի մասով.

գ) իրավաբանական անձի կապիտալում ձեռք բերվող ծավալի, մասնաբաժնի կամ իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողության աստիճանի մասով.

դ) հիմնադրված իրավաբանական անձի, մասնաճյուղի, ներկայացուցչության, գրանցված անհատ ձեռնարկատիրոջ գործարքների/գործառնությունների մասով՝ նրանց կողմից գործունեություն իրականացնելու ընթացքում՝ քվոտայի, տնտեսական նպատակահարմարության ստուգման տեսքով կամ ցանկացած այլ քանակական տեսքով.

ե) այն ֆիզիկական անձանց ընդհանուր թվի սահմանափակումների մասով, որոնց կարող է վարձել հիմնադրվող իրավաբանական անձը, կամ որոնք անհրաժեշտ են եւ անմիջական առնչություն ունեն գործունեությանը՝ քվոտաների կամ տնտեսական

նպատակահարմարության ստուգման տեսքով:

Եթե Կողմը շուկայի հասանելիության վերաբերյալ պարտավորություն է ստանձնում մեկ Կողմի ծառայությունների մատակարարի կողմից ծառայության մատակարարման համար մյուս Կողմի տարածքում հիմնադրման միջոցով, ապա նա պարտավորվում է դրա կապակցությամբ թույլատրել կապիտալի համապատասխան փոխանցումն իր տարածք:

**Հոդված 22**

**Փաստաթղթերի վավերացումը (լեգալիզացումը)**

Կողմերը չեն պահանջում ցանկացած այլ Կողմի անձանց մասնակցությամբ իրավաբանական անձանց, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների ստեղծման ժամանակ վավերացնել (լեգալիզացնել) կամ ապոստիլով հաստատել Կողմի պետական իշխանության գրանցող մարմին ներկայացվող փաստաթղթերը:

## ԳԼՈՒԽ IV

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Հոդված 23**

**Կիրառության ոլորտը**

1. Սույն գլուխը կիրառվում է ծառայությունների առեւտրի, հիմնադրման, գործունեության եւ ներդրումների իրականացման նպատակներով մեկ Կողմի ֆիզիկական անձանց կատեգորիաների՝ մյուս Կողմերի տարածքներ ժամանակավոր մուտքի եւ գտնվելու վրա ազդող միջոցների նկատմամբ, որոնք նշված են սույն համաձայնագրի Դ հավելվածում Կողմերի անհատական ցանկերում:

2. Սույն գլխի դրույթները չեն կիրառվում Կողմի տարածքում սուբսիդիաների եւ պետական ու մունիցիպալ օժանդակության այլ ձեւերի նկատմամբ:

3. Սույն համաձայնագրի դրույթները Կողմերին չեն խոչընդոտում կիրառել միջոցներ՝ իրենց տարածք ֆիզիկական անձանց մուտքը կամ այնտեղ նրանց ժամանակավոր գտնվելը կարգավորելու համար՝ ներառյալ այն միջոցները, որոնք անհրաժեշտ են իր սահմանների ամբողջականության պաշտպանության եւ սահմանով

ֆիզիկական անձանց կանոնակարգված տեղաշարժի ապահովման համար՝ պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվում այնպիսի եղանակով, որով չեղյալ են համարվում կամ կրճատվում են ցանկացած Կողմի կողմից ստացվող օգուտները՝ սույն համաձայնագրի Դ հավելվածում անհատական ցանկով սահմանված պայմանների համաձայն:

4. Սույն համաձայնագրի դրույթները չեն տարածվում Կողմերի ֆիզիկական անձանց՝ զբաղվածության շուկային հասանելիություն ունենալու, մշտական բնակության, կացության քարտ կամ քաղաքացիություն ստանալու, մյուս Կողմի ֆիզիկական անձանց վիզաների տրամադրման պահանջների կամ ընթացակարգերի, ինչպես նաեւ մշտական հիմունքներով աշխատանքի անցնելու նպատակներով մեկ Կողմի ֆիզիկական անձանց կողմից մյուս Կողմի տարածք մուտքի կամ այնտեղ գտնվելու վրա:

## Հոդված 24

## Առավել բարենպաստության ռեժիմը

1. Սույն գլխում ընդգրկված ցանկացած միջոցի մասով յուրաքանչյուր Կողմ սույն համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետում նշված ֆիզիկական անձանց կատեգորիաներին տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա տրամադրում է սույն համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության ֆիզիկական անձանց համանման կատեգորիաներին:

2. Կողմը կարող է կիրառել սույն հոդվածի 1-ին կետին չհամապատասխանող միջոցներ այն դեպքում, երբ այդ միջոցները նախատեսված են սույն համաձայնագրի Ա հավելվածում այդ Կողմի անհատական ցանկով:

3. Սույն համաձայնագրի դրույթները Կողմերին չեն խոչընդոտում սահմանակից երկրներին տրամադրել առավելություններ այն ծառայությունների մերձսահմանային առեւտուրը դյուրացնելու նպատակով, որոնք տեղական մակարդակով արտադրվում եւ սպառվում են Կողմերի սահմաններին հարակից տարածքներում, ինչպես նաեւ՝ ներդրումների իրականացման համար:

4. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան տրամադրվող ռեժիմը չի տարածվում այն առավելությունների վրա, որոնք Կողմը տրամադրում է կամ հետագայում կտրամադրի՝

ա) տնտեսական ինտեգրման, ծառայությունների ազատ առեւտրի եւ համանման այլ պայմանավորվածությունների մասին այդ Կողմի համաձայնագրերին համապատասխան, եթե դրանք համապատասխանում են ԾԱԳՀ-ի V հոդվածի

չափորոշիչներին եւ պայմաններին, կամ

բ) կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերի կամ հարկման հարցերով այլ պայմանավորվածությունների հիման վրա:

**Հոդված 25**

**Ազգային ռեժիմը**

1. Սույն գլխում ընդգրկված ցանկացած միջոցի մասով՝ սույն համաձայնագրի Դ հավելվածում Կողմերի անհատական ցանկերով նախատեսված ոլորտներում եւ դրանց մեջ սահմանված պայմաններին ու սահմանափակումներին համապատասխան՝ յուրաքանչյուր Կողմ սույն համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ մյուս Կողմերի ֆիզիկական անձանց կատեգորիաներին տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա տրամադրում է իր սեփական ֆիզիկական անձանց համանման կատեգորիաներին:

2. Կողմերը սույն հոդվածի 1-ին կետի պահանջները կարող են կատարել մյուս Կողմերի ֆիզիկական անձանց համապատասխան կատեգորիաներին կամ ֆորմալ առումով նույնպիսի (համանման) ռեժիմի, կամ այն ռեժիմի համեմատ ֆորմալ առումով այլ ռեժիմի տրամադրման միջոցով, որն այդ Կողմը տրամադրում է իր սեփական ֆիզիկական անձանց համանման կատեգորիաներին:

3. Ֆորմալ առումով նույնպիսի (համանման) ռեժիմը կամ ֆորմալ առումով տարբերվող ռեժիմը համարվում է պակաս բարենպաստ, եթե դրանով մրցակցության պայմանները փոխվում են հօգուտ այդ Կողմի ծառայությունների, ծառայությունների մատակարարների եւ ներդրողների՝ ցանկացած այլ Կողմի համանման ծառայությունների, ծառայությունների մատակարարների եւ ներդրողների հետ համեմատած:

**Հոդված 26**

**Շուկայի հասանելիությունը**

Սույն համաձայնագրի Դ հավելվածում Կողմերի անհատական ցանկերում նախատեսված ոլորտներում, եւ դրանցում նախատեսված պայմաններին եւ սահմանափակումներին համապատասխան, սույն համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝ մյուս Կողմերի ֆիզիկական անձանց կատեգորիաների նկատմամբ Կողմերից որեւէ մեկը չի կիրառում եւ չի սահմանում՝

մյուս Կողմի այն ֆիզիկական անձանց ընդհանուր թվի սահմանափակումներ,

որոնք կարող են զբաղվածություն ունենալ կոնկրետ ոլորտում (համապատասխան ոլորտում իրականացնել ծառայության մատակարարում),

տնտեսական նպատակահարմարության հաստատման պահանջ:

**Հոդված 27**

**Լրացուցիչ պարտավորությունները**

Այն միջոցները, որոնք ենթակա չեն սույն համաձայնագրի 25-րդ եւ 26-րդ հոդվածներին համապատասխան պարտավորությունների ցանկերում ներառման, այդ թվում՝ այնպիսիք, որոնք առնչվում են որակավորման, չափանիշների եւ լիցենզավորման հարցերին, ներառվում են Կողմերի անհատական ցանկերում՝ սույն համաձայնագրի Դ հավելվածի «Լրացուցիչ պարտավորությունները» բաժնում:

## ԳԼՈՒԽ V

## ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

**Հոդված 28**

**Կիրառության ոլորտը**

1. Սույն գլուխը կիրառվում է սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մի Կողմի ներդրողների կողմից մյուս Կողմի տարածքում իրականացված ներդրումների նկատմամբ:

2. Սույն գլուխը չի կիրառվում սուբսիդիաների տրամադրման կամ Կողմի պետական եւ մունիցիպալ աջակցության այլ ձեւերի նկատմամբ:

**Հոդված 29**

**Ներդրումների խրախուսումը եւ պաշտպանությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողների համար իր օրենսդրությանը համապատասխան բարենպաստ պայմաններ է ստեղծում իր տարածքում ներդրումների իրականացման համար:

2. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողների ներդրումների համար իր օրենսդրությանը համապատասխան տրամադրում է լիարժեք անվտանգություն եւ պաշտպանություն իր տարածքում:

## Հոդված 30

## Ազգային ռեժիմը

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողների իր տարածքում ներդրումների համար տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա տրամադրում է իր սեփական ներդրողների ներդրումների համար:

2. Յուրաքանչյուր Կողմ պահպանում է իր օրենսդրությանը համապատասխան սույն հոդվածի 1-ին կետում նշված ազգային ռեժիմից բացառումներ ընդունելու եւ կիրառելու իրավունքը:

## Հոդված 31

## Առավել բարենպաստության ռեժիմը

1. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողների ներդրումների համար իր տարածքում տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որը նա ինքը տրամադրում է ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումների համար:

2. Սույն համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մյուս Կողմի ներդրողների ներդրումների համար այնպիսի առավելություններ կամ առանձնաշնորհումներ տրամադրելու Կողմի պարտականություն, որոնք առաջին Կողմը տրամադրում է կամ հետագայում կտրամադրի՝

ա) առաջին Կողմի տնտեսական ինտեգրման մասին համաձայնագրերին համապատասխան, ինչպիսիք են ազատ առեւտրի, մաքսային միությունների ստեղծման մասին համաձայնագրերը կամ դրանց հանգեցնող պայմանավորվածությունները,

բ) կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերի կամ հարկման հարցերով այլ պայմանավորվածությունների հիման վրա:

## Հոդված 32

## Վնասի փոխհատուցումը

Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողների ներդրումների համար պատերազմական գործողությունների, զինված բախման, քաղաքացիական

անկարգությունների, քաղաքացիական հուզումների, հեղափոխության, ազգային արտակարգ դրության, խռովության, ապստամբության կամ նմանատիպ այլ իրավիճակների հետեւանքով իր տարածքում այդ ներդրողների ներդրումներին պատճառված վնասի փոխհատուցման համար իր կողմից ընդունվող կամ պահպանվող միջոցների առնչությամբ տրամադրում է այնպիսի ռեժիմ, որը պակաս բարենպաստ չէ այն ռեժիմից, որն ինքը տրամադրում է՝

ա) իր սեփական ներդրողների ներդրումների համար, կամ

բ) ցանկացած երրորդ պետության ներդրողների ներդրումների համար:

**Հոդված 33**

**Էքսպրոպրիացիան (սեփականազրկումը)**

1. Մեկ Կողմի ներդրողների՝ մյուս Կողմի տարածքում իրականացրած ներդրումները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ենթակա լինեն էքսպրոպրիացիայի, ազգայնացման կամ նմանատիպ ազդեցություն ունեցող միջոցների, որոնք խոչընդոտում են այդ ներդրողի կողմից իր ներդրումների օգտագործումը, տիրապետումը կամ տնօրինումը (այսուհետ՝ էքսպրոպրիացիա), բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջոցներն իրականացվում են՝

հանրային շահերից ելնելով, մասնավորապես՝ սույն համաձայնագրի 9-րդ հոդվածի շրջանակներում,

առաջին Կողմի օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան: Ընդ որում՝ նշված ընթացակարգը պետք է պաշտոնապես հրապարակված լինի կամ այլ կերպ հասանելի լինի՝ հանրության կողմից ծանոթանալու համար՝ մինչեւ էքսպրոպրիացիան իրականացնելու ամսաթիվը,

ոչ խտրական հիմունքներով եւ

ժամանակին կատարվող, համարժեք եւ արդյունավետ փոխհատուցման վճարմամբ՝ սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

2. Պարզելու համար, թե արդյոք Կողմի միջոցը (միջոցների համալիրը) էքսպրոպրիացիա է համարվում, պահանջվում է յուրաքանչյուր առանձին դեպքի գնահատում՝ հետեւյալ փաստերի հիման վրա՝

ա) այդ միջոցի (միջոցների համալիրի) ազդեցությունը ներդրողի ներդրումների շուկայական արժեքի վրա, թեեւ ինքնին այն փաստը, որ Կողմի միջոցը (միջոցների համալիրը) անբարենպաստ ազդեցություն է թողնում մյուս Կողմի ներդրողի ներդրումների արժեքի վրա, չի պարզում, որ տեղի է ունեցել էքսպրոպրիացիա,

բ) այդ միջոցի (միջոցների համալիրի) բնույթը՝ ներառյալ այդ միջոցի (միջոցների համալիրի) տեւողությունը:

3. Էքսպրոպրիացիա չեն համարվում՝

ա) ապահովման միջոցները, որոնք Կողմի ներդրողի ներդրումների նկատմամբ կիրառվում են այն մյուս Կողմի քննչական եւ դատական մարմինների կողմից, որի տարածքում ներդրումներն իրականացվել են,

բ) հարկերի եւ վճարների սահմանման եւ գանձման հետ կապված Կողմի միջոցները՝ պայմանով, որ այդ հարկերն ու վճարները կամայական չեն եւ չեն նախատեսում ներդրողի ծագումից կամ կապիտալից կախված տարբերակված դրույքաչափ՝ հաշվի առնելով հարկման հարցերին առնչվող այն միջազգային համաձայնագրերը եւ պայմանավորվածությունները, որոնց մասնակիցն է այդ Կողմը,

գ) Կողմի կողմից ներդրողի ներդրումների ռեկվիզիցիան՝ պայմանով, որ այդ միջոցները կիրառվում են տարերային աղետների, վթարների, համաճարակների դեպքում, անասնահամաճարակային եւ արտակարգ բնույթ կրող համանման այլ հանգամանքներում, իսկ ռեկվիզիցիայի ենթարկված գույքը մյուս Կողմի ներդրողին է վերադարձվել առանց անհիմն ուշացման՝ այն բանից հետո, երբ դադարել է գոյություն ունենալ արտակարգ իրավիճակը՝ այդ գույքի շուկայական արժեքին համապատասխան դրան պատճառված վնասի փոխհատուցմամբ,

դ) մաքսային կարգավորման միջոցները,

ե) հարկադիր լիցենզիաների տրամադրումը, որոնք տրվել են ԱՀԿ-ի համաձայնագրի, մասնավորապես՝ «Մտավոր սեփականության իրավունքների՝ առեւտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրի (ԹՐԻՓՍ) շրջանակներում Կողմի պարտավորություններին համապատասխան:

4. Սույն հոդվածի 1-ին կետում նշված փոխհատուցումը պետք է համարժեք լինի էքսպրոպրիացիայի ենթարկվող ներդրումների շուկայական արժեքին, որը հաշվարկվում է այն ամսաթվի դրությամբ գործող գներով, երբ հրապարակայնորեն հայտնի է դարձել փաստացի կամ առաջիկա էքսպրոպրիացիայի մասին: Էքսպրոպրիացիայի ամսաթվից մինչեւ վճարման ամսաթիվը փոխհատուցման մակարդակը ենթակա է տոկոսների հաշվեգրման՝ շուկայական հիմունքով սահմանվող առեւտրային դրույքաչափով: Փոխհատուցումն առանց ուշացման պետք է վճարվի այն արժույթով, որով ի սկզբանե իրականացվել են ներդրումները: Ներդրողը պետք է ունենա այդ փոխհատուցումն իր ընտրությամբ ազատ օգտագործվող ցանկացած արժույթով փոխարինելու իրավունք:

5. Կողմը թույլ է տալիս սույն հոդվածի 1-ին կետում նշված փոխհատուցման՝ իր տարածքից ազատ փոխանցումը մյուս Կողմի ներդրողի կողմից՝ հաշվի առնելով սույն

համաձայնագրի 12-րդ հոդվածի դրույթները:

## Հոդված 34

## Սուբրոգացիան (հետադարձ պահանջը)

1. Եթե Կողմը կամ նրա կողմից լիազորված մարմինն այդ Կողմի ներդրողին ապահովագրության պայմանագրով սահմանված երաշխիքի հիման վրա կամ այլ ձեւով կատարել է Կողմի եւ ներդրողի միջեւ պայմանագրով նախատեսված ոչ առեւտրային ռիսկերից երաշխիքների, ոչ առեւտրային ռիսկերից վնասի փոխհատուցման վճարում, որոնք տրամադրել է ներդրումների համար, ապա մյուս Կողմը ճանաչում է այդ ներդրման հետ կապված ներդրողի պահանջի կամ իրավունքի փոխանցումն առաջին Կողմին կամ դրա կողմից լիազորված մարմնին՝ սուբրոգացիայի կարգով:

2. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան փոխանցված իրավունքները կամ պահանջները չեն կարող լինել ավելին, քան ներդրողի սկզբնական իրավունքները կամ պահանջները: Այդ իրավունքները կամ պահանջներն իրականացվում են այն Կողմի օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում իրականացվել են ներդրումները, սակայն չհակասելով սույն գլխի 30-րդ եւ 31-րդ հոդվածների եւ սույն համաձայնագրի «Հիմնադրումը եւ գործունեությունը» III գլխի 19-րդ եւ 20-րդ հոդվածների դրույթներին:

3. Եթե Կողմը կամ նրա կողմից լիազորված մարմինը վճարում է կատարել այդ Կողմի ներդրողին եւ ստացել ներդրողի իրավունքներն ու պահանջները, ապա այդ ներդրողը, եթե միայն նա լիազորված չէ Կողմի կամ նրա կողմից լիազորված մարմնի անունից գործելու համար, նշված իրավունքներն ու պահանջները չի օգտագործում մյուս Կողմի դեմ:

## Հոդված 35

## Վճարումների փոխանցումը

1. Բացառությամբ սույն համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված դեպքերի՝ յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի ներդրողներին՝ առաջին Կողմի օրենսդրությանը համապատասխան նրանց կողմից իրենց հարկային եւ այլ պարտավորությունների կատարման պայմանով, երաշխավորում է նրանց ներդրումների հետ կապված վճարումների, այդ թվում՝ ստորեւ նշվածների ազատ փոխանցումն արտասահման՝

ա) եկամուտներ,

բ) յուրաքանչյուր Կողմի կողմից որպես ներդրում ճանաչված փոխառությունների եւ վարկերի մարման հաշվին վճարվող միջոցներ, ինչպես նաեւ՝ դրանց նկատմամբ հաշվեգրված տոկոսներ,

գ) շահույթ, շահաբաժիններ, կապիտալում ներդրումներ, կապիտալի աճ եւ միջոցներ, որոնք ստացվել են բոլոր ներդրումների կամ դրանց մի մասի մասնակի կամ ամբողջական վաճառքից, կամ ներդրումների մասնակի կամ ամբողջական իրացումից,

դ) սույն համաձայնագրի 32-րդ, 33-րդ եւ 36-րդ հոդվածներում նախատեսված փոխհատուցում,

ե) աշխատավարձ եւ այլ վարձատրություններ, որոնք ստացել են առաջին Կողմի տարածքում կատարվող ներդրումների հետ կապված աշխատանքի թույլտվություն ստացած մյուս Կողմի ներդրողները եւ ֆիզիկական անձինք:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված վճարումների փոխանցումն իրականացվում է առանց անհիմն ուշացման, ազատ օգտագործվող արժույթով՝ փոխանցման ամսաթվի դրությամբ կիրառվող փոխարժեքով՝ այն Կողմի արժութային օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում իրականացվել են ներդրումները:

3. Սույն համաձայնագրի մեջ ոչինչ չի շոշափում ցանկացած Կողմի այն իրավունքներն եւ պարտավորությունները, որոնք բխում են Արժույթի միջազգային հիմնադրամին նրա անդամակցությունից՝ ներառյալ արժութային գործառնությունների կարգավորման միջոցներին առնչվող իրավունքներն ու պարտավորությունները՝ պայմանով, որ Կողմի այդ միջոցները համապատասխանում են ԱՄՀ համաձայնագրի հոդվածներին եւ (կամ) պայմանով, որ Կողմը չի սահմանում վճարումների եւ փոխանցումների հետ կապված սահմանափակումներ, որոնք անհամատեղելի են այդ գործառնություններին առնչվող՝ սույն համաձայնագրով իր պարտավորությունների հետ՝ բացառությամբ սույն համաձայնագրի 11-րդ կետում նշված դեպքերի կամ Արժույթի միջազգային հիմնադրամի խնդրանքի հիման վրա սահմանափակումների կիրառման դեպքերի:

## Հոդված 36

### Կողմի եւ մյուս Կողմի ներդրողի միջեւ վեճերի լուծումը

1. Կողմի եւ մյուս Կողմի ներդրողի միջեւ վեճը, որն առնչվում է այդ Կողմի տարածքում նրա ներդրումներին, լուծվում է բանակցությունների միջոցով: Այդ նպատակով մի Կողմի ներդրողը այդպիսի բանակցությունների վերաբերյալ գրավոր հարցում է ուղարկում մյուս Կողմին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ բանակցությունների վերաբերյալ գրավոր հարցումը պարունակում է՝

ա) վեճի կողմ հանդիսացող ներդրողի լրիվ անվանումը, փաստացի եւ իրավաբանական հասցեն, եւ ներդրողի ներկայացուցչի ամբողջական անվանումը, փաստացի եւ իրավաբանական հասցեն, ինչպես նաեւ վեճի կապակցությամբ ներդրողի անունից եւ ի շահ նրա գործողություն կատարելու՝ ներկայացուցչի իրավունքը հաստատող փաստաթղթերը (ներկայացուցչի առկայության դեպքում).

բ) հարցման իրավական եւ փաստական հիմքը՝ ներառյալ վիճարկվող բոլոր միջոցները եւ իրավիճակները,

գ) սույն համաձայնագրի դրույթները, որոնց, ներդրողի կարծիքով, չեն համապատասխանում Կողմի վիճարկվող միջոցները,

դ) վեճի հնարավոր կարգավորման վերաբերյալ ներդրողի առաջարկությունները:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ բանակցությունների վերաբերյալ հարցումը չի համարվում պատշաճ կերպով ուղարկված, եթե այն չի պարունակում սույն հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկատվությունը կամ եթե դա չի ուղարկվել Կողմի լիազորված մարմին:

4. Կողմերից յուրաքանչյուրը, սույն համաձայնագիրն ուժի մտնելուց հետո 30 օրվա ընթացքում, ավանդապահին տեղեկացնում է սույն հոդվածի 3-րդ կետում նշված լիազորված մարմինների մասին: Կողմերի լիազորված մարմինների ցանկը տեղադրվում է ավանդապահի պաշտոնական կայքում: Լիազորված մարմինների փոփոխության դեպքում համապատասխան Կողմն անհապաղ այդ մասին ծանուցում է սույն համաձայնագրի ավանդապահին:

5. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված բանակցությունները չեն սկսվել կամ չեն հանգեցրել փոխշահավետ կարգավորման սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան բանակցությունների վերաբերյալ հարցումն ուղարկելու օրվանից հետո վեց ամսվա ընթացքում, ապա սույն համաձայնագրի խախտման հետ կապված վեճը ենթակա է քննության վեճի լուծման այն ընթացակարգերի շրջանակներում, որոնք պետք է համաձայնեցվեն վեճի կողմերի կողմից: Եթե այդ ընթացակարգերը չեն համաձայնեցվել սույն կետում նշված վեցամսյա ժամկետի ընթացքում, ապա վեճի կողմ հանդիսացող ներդրողի կողմից վեճը կարող է քննության համար փոխանցվել այն Կողմի դատարանին, որի տարածքում իրականացվել են ներդրումները, կամ հետեւյալ արբիտրաժային մարմիններից (հաստատություններից) որեւէ մեկին՝

ա) այն Կողմի միջնորդ դատարան (որտեղ դա կիրառելի է), որի տարածքում իրականացվել են ներդրումները,

բ) ad hoc արբիտրաժ, որը հիմնադրվում է Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առեւտրային իրավունքի հանձնաժողովի (ՅՈՒՆՍԻՏՐԱԼ) Արբիտրաժային կանոնակարգին համապատասխան, որը գործում է արբիտրաժային վարույթ սկսելու ամսաթվի դրությամբ, եթե վեճի կողմերը պայմանավորվածության չեն եկել նշված կանոնակարգի կոնկրետ խմբագրության կիրառման շուրջ,

գ) վեճի կողմերի կողմից համաձայնեցված՝ մշտապես գործող միջազգային այլ արբիտրաժային մարմին (հաստատություն):

Երբ ներդրողը վեճը փոխանցում է վեճի կողմ հանդիսացող Կողմի դատարանի, Կողմի միջնորդ դատարանի, ad hoc դատարանի կամ վեճի կողմերի կողմից համաձայնեցված այլ արբիտրաժային մարմնի (հաստատության) քննությանը, չորս ընթացակարգերից որեւէ մեկի ընտրությունը համարվում է վերջնական:

6. Սույն հոդվածի 5-րդ կետի «ա»-«գ» ենթակետերում նշված արբիտրաժային մարմիններից որեւէ մեկին (հաստատություն) վեճը փոխանցելու համար տվյալ վեճի կողմ հանդիսացող ներդրողը պետք է սույն հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերում նշված Կողմի լիազորված մարմին ուղարկի վեճն արբիտրաժային մարմնի (հաստատության) քննությանը փոխանցելու վերաբերյալ հարցման մասին գրավոր ծանուցում:

7. Սույն հոդվածի 6-րդ կետում նշված՝ վեճն արբիտրաժային մարմնի (հաստատության) քննությանը փոխանցելու վերաբերյալ հարցման մեջ նշվում է, թե արդյոք վեճի կողմերի միջեւ անցկացվել են բանակցություններ: Արբիտրաժի քննությանը չեն կարող փոխանցվել այն միջոցները կամ իրավիճակները, որոնք նախատեսված չեն եղել սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ բանակցությունների վերաբերյալ հարցման մեջ: Սույն հոդվածի 6-րդ կետում նշված՝ վեճն արբիտրաժային մարմնի (հաստատության) քննությանը փոխանցելու վերաբերյալ հարցման մեջ չեն լրացվում եւ չեն փոփոխվում այն հայցապահանջները, որոնք շարադրված են սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ բանակցությունների անցկացման վերաբերյալ գրավոր հարցման մեջ:

Արբիտրաժային մարմինը (հաստատությունը) իրավունք չունի վեճերը քննության ընդունելու եւ սույն համաձայնագրի դրույթներին Կողմի միջոցի համապատասխանության մասին վճիռ կայացնելու, եթե այդ միջոցը կամ դրույթները նշված չեն եղել սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ բանակցություններ անցկացնելու մասին գրավոր հարցման մեջ:

8. Սույն համաձայնագրում, այդ թվում՝ սույն համաձայնագրի 31-րդ հոդվածում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մի Կողմի ներդրողին սույն համաձայնագրի կապակցությամբ մյուս Կողմի հետ ծագող վեճերի լուծման այնպիսի մեխանիզմներ,

ինստիտուտներ կամ ընթացակարգեր կիրառելու իրավունքի տրամադրում, որոնք տարբերվում են սույն հոդվածում ուղղակիորեն սահմանվածներից:

9. Կողմերը ցանկացած ժամանակ կարող են պայմանավորվել սույն համաձայնագրի դրույթների համատեղ մեկնաբանման շուրջ: Վեճի ցանկացած փուլում, այդ թվում՝ բանակցությունների կամ արբիտրաժային վարույթի փուլում, վեճի կողմ հանդիսացող Կողմը կարող է մյուս Կողմերին ուղարկել սույն համաձայնագրի՝ մյուս Կողմի ներդրողի հետ վեճի առարկա հանդիսացող դրույթի մեկնաբանման շուրջ համատեղ խորհրդակցությունների անցկացման վերաբերյալ գրավոր հարցում: Այդ խորհրդակցությունների վերաբերյալ հարցման պատճենը առաջին Կողմը միաժամանակ ուղարկում է վեճի կողմ հանդիսացող ներդրողին եւ արբիտրաժային մարմին (հաստատություն), եթե վեճը փոխանցվել է սույն հոդվածի 5-րդ կետի «ա»-«գ» ենթակետերում նշված արբիտրաժային մարմիններից որեւէ մեկի (հաստատության) քննությանը:

10. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան բանակցությունների առարկա հանդիսացող վեճը սույն հոդվածի 9-րդ կետի շրջանակներում խորհրդակցությունների վերաբերյալ հարցումն ստանալու օրվանից չի կարող փոխանցվել արբիտրաժային մարմին (հաստատություն): Սույն հոդվածի 5-րդ կետի «ա»-«գ» ենթակետերում նշված արբիտրաժային մարմիններից որեւէ մեկի (հաստատության) քննությանն ուղարկված վեճի դեպքում սույն հոդվածի 9-րդ կետին համապատասխան խորհրդակցությունների վերաբերյալ հարցումն ստանալու օրվանից արբիտրաժային ընթացակարգերը կասեցվում են:

11. Սույն հոդվածի 10-րդ կետին համապատասխան կասեցված արբիտրաժային ընթացակարգերը կարող են շարունակվել՝

ա) այն օրվանից, երբ մյուս Կողմը վեճի կողմերին ծանուցում է ուղարկում վեճի կողմ հանդիսացող Կողմի հետ սույն համաձայնագրի դրույթի մեկնաբանման շուրջ խորհրդակցություններ չնախաձեռնելու իր մտադրության մասին.

բ) այն օրվանից, երբ Կողմերից որեւէ մեկը մյուս Կողմերին եւ ներդրողին ծանուցում է ուղարկում համաձայնագրի կոնկրետ դրույթի մեկնաբանման վերաբերյալ համատեղ պայմանավորվածության մասին.

գ) այն օրվանից, երբ Կողմերից որեւէ մեկը մյուս Կողմերին եւ ներդրողին ծանուցում է ուղարկում այն մասին, որ համաձայնագրի համապատասխան դրույթի մեկնաբանման վերաբերյալ պայմանավորվածություն չի կարող ձեռք բերվել, սակայն ոչ շուտ, քան այն ամսաթվից սկսած 60 օր հետո, երբ սույն համաձայնագրի կոնկրետ դրույթի մեկնաբանությունների շուրջ խորհրդակցությունների վերաբերյալ հարցումը Կողմն ուղարկել է մյուս Կողմերին:

12. Կողմերի կողմից սույն համաձայնագրի դրույթների համատեղ մեկնաբանումը պարտադիր է Կողմերի, Կողմերի ներդրողների եւ այն արբիտրաժային մարմինների (հաստատությունների) համար, որոնց, սույն համաձայնագրին համապատասխան, ուղարկվում են Կողմի ներդրողի եւ մյուս Կողմի միջեւ ծագած վեճերը:

13. ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի կանոնակարգին համապատասխան անցկացվող արբիտրաժային վարույթների համար՝

ա) նշանակվում է երեք արբիտր՝ ad hoc արբիտրաժային մարմնի (հաստատության) կազմում,

բ) արբիտրաժային վարույթի լեզուն ռուսերենն է,

գ) արբիտրաժային վարույթի անցկացման վայրը վեճի Կողմ հանդիսացող Կողմի մայրաքաղաքն է,

դ) ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի արբիտրաժային կանոնակարգի 9-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված ժամկետները կազմում են 90 օր,

ե) ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի արբիտրաժային կանոնակարգի 20-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետը, որի ընթացքում վեճի կողմ հանդիսացող ներդրողն իր գրավոր հայցադիմումը ներկայացնում է վեճի կողմ հանդիսացող Կողմին եւ արբիտրներից յուրաքանչյուրին, որոշվում է արբիտրաժային մարմնի (հաստատության) կողմից,

զ) ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի արբիտրաժային կանոնակարգի 21-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ժամկետը, որի ընթացքում վեճի կողմ հանդիսացող Կողմը հայցի վերաբերյալ իր գրավոր առարկություններն ուղարկում է վեճի կողմ հանդիսացող ներդրողին եւ արբիտրներից յուրաքանչյուրին, որոշվում է արբիտրաժային մարմնի (հաստատության) կողմից,

է) վեճի կողմերից ոչ մեկը, ինչպես նաեւ արբիտրաժային մարմինը (հաստատությունը) կամ դրա անդամներն իրավունք չունեն բացահայտելու վեճին առնչվող ցանկացած տեղեկատվություն՝ ներառյալ արբիտրաժային մարմնի (հաստատության) վճիռը, առանց վեճի երկու կողմերի գրավոր համաձայնության: Միջազգային համաձայնագրերի հիման վրա ներդրողի եւ պետության միջեւ արբիտրաժային վարույթների համատեքստում թափանցիկության մասին ՅՈՒՆՍԻՏՐԱԼ-ի կանոնները չեն կիրառվում,

ը) արբիտրաժային մարմնի (հաստատության)՝ անհրաժեշտ իրավասություն չունենալու մասին հայտարարությունը, վեճի կողմ հանդիսացող Կողմի կողմից արբիտրի նշանակումը կամ արբիտրի նշանակման մեջ այդ Կողմի մասնակցությունը,

այդ Կողմի կողմից ներդրողի հայցի վերաբերյալ իր առարկության ուղարկումը որեւէ դեպքում չպետք է դիտարկվի որպես այդ Կողմի կողմից արբիտրաժային մարմնի (հաստատության) իրավասության ճանաչում,

թ) արբիտրաժային մարմինն արբիտրաժային մարմնի իրավասությանն առնչվող առարկության մասին որոշումն ընդունում է նախքան վեճը՝ որպես նախնական բնույթ ունեցող հարց ըստ էության քննելը:

14. Կողմի ներդրողի եւ մյուս Կողմի միջեւ ծագած՝ այդ ներդրողի եւ Կողմի միջեւ ձեռք բերված այլ պայմանավորվածություններից բխող վեճերը լուծվում են այդ պայմանավորվածություններով նախատեսված կարգով:

15. Սույն համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում վեճի կողմերին վեճը կարգավորել արտադատական կարգով, այդ թվում՝ հաշտարարության, միջնորդության ընթացակարգերի եւ նմանատիպ այլ մեխանիզմների կիրառման միջոցով, եթե վեճի երկու կողմերը պայմանավորվեն դրանց կիրառման մասին:

16. Յուրաքանչյուր Կողմ արբիտրաժային վճիռը ճանաչում է որպես վերջնական ու պարտադիր ուժ ունեցող եւ պարտավորվում է ապահովել դրա կատարումն իր տարածքում իր օրենսդրությանը համապատասխան, եթե միայն՝

ա) վեճի կողմ հանդիսացող Կողմը, վեճի առնչությամբ կիրառելի կանոններին եւ ընթացակարգերին համապատասխան, չի դիմում այդ արբիտրաժային վճիռը բողոքարկելու, փոփոխելու, վերանայելու կամ չեղյալ համարելու հարցով, կամ

բ) այն Կողմը, որի նկատմամբ կայացվել է արբիտրաժային վճիռը ճանաչելու կամ ի կատար ածելու մասին որոշում, ուղարկում է այդ արբիտրաժային վճիռը ճանաչելը կամ ի կատար ածելը մերժելու վերաբերյալ հարցում՝ տվյալ ոլորտում այն միջազգային համաձայնագրի դրույթներին համապատասխան, որի կողմն է նա:

Արբիտրաժային (դատական) վարույթի շրջանակներում Կողմն իրավունք ունի վեճի մյուս կողմի նկատմամբ հակընդդեմ հայց ներկայացնել վեճի առարկայի հարցով:

17. Որեւէ հայց չի կարող արբիտրաժային մարմնին (հաստատությանը) փոխանցվել այն օրվանից սկսած ավելի քան երեք տարի լրանալուց հետո, երբ վեճի կողմ հանդիսացող ներդրողն առաջին անգամ ստացել է կամ հիմնավորված կերպով պետք է առաջին անգամ ստացած լիներ սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված խախտման մասին տեղեկությունները՝ մինչեւ սույն հոդվածի 1-ին կետում նշված՝ բանակցությունների վերաբերյալ գրավոր հարցումն ուղարկելու օրը:

18. Սույն համաձայնագրի 10-րդ հոդվածին համապատասխան՝ Կողմի կողմից կիրառվող միջոցին առնչվող՝ մի Կողմի ներդրողի եւ մյուս Կողմի միջեւ վեճը չի կարող արբիտրաժային վարույթի առարկա լինել:

19. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո Կողմերը կարող են պայմանավորվել արբիտրների ցուցակի մասին, որը, Կողմերի համաձայնությամբ, պետք է լինի արբիտրների նշանակման համար պարտադիր, եթե հայցը մի Կողմի ներդրողի կողմից սույն հոդվածի 5-րդ կետի «գ» ենթակետին համապատասխան փոխանցվելու է արբիտրաժային մարմնին (հաստատությանը):

## ԳԼՈՒԽ VI

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 37

### Տնտեսական ինտեգրումը

Սույն համաձայնագրի դրույթները չեն կիրառվում այն Կողմերի միջեւ, որոնք ունեն միմյանց միջեւ կնքված երկկողմ եւ (կամ) բազմակողմ միջազգային պայմանագրեր, որոնցով նախատեսվում է սույն համաձայնագրի դրույթների հետ համեմատած՝ ինտեգրման առավել խորը մակարդակ, կամ որոնցով տրամադրվում են լրացուցիչ առավելություններ նրանց ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց համար:

### Հոդված 38

### Սահմանափակումների կրճատումը

Կողմի ծառայությունների առեւտրի, հիմնադրման եւ գործունեության մասով սույն համաձայնագրով նախատեսված պայմանների հետագա բարելավման նպատակներով Կողմերը հինգ տարին առնվազն մեկ անգամ անցկացնում են բանակցություններ, որոնք ուղղված են ոլորտների ցանկի ընդլայնմանը եւ Կողմերի անհատական ցանկերում նշված սահմանափակումների թվի աստիճանական կրճատմանը:

Այդպիսի առաջին բանակցությունները պետք է տեղի ունենան սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան հինգ տարի անց:

### Հոդված 39

### Նոր ծառայությունների հատվածներ եւ գործունեության տեսակներ

Կողմերը պահպանում են նոր հատվածների ու գործունեության տեսակների մասով ցանկացած միջոց սահմանելու կամ պահպանելու իրենց իրավունքը՝ ներառյալ գոյություն ունեցող եւ նոր արտադրանքի կամ արտադրանքի մատակարարման մեթոդի հետ կապված ծառայություններն ու գործունեության տեսակները, որոնք, սույն

համաձայնագիրն ուժի մտնելու օրվա դրությամբ, չեն մատակարարվում կամ չեն իրականացվում Կողմի տարածքում:

## Հոդված 40

## Վիճելի հարցերը

Կողմերի միջեւ սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով կամ «Ազատ առեւտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրի 19-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգերի միջոցով:

## Հոդված 41

## Փոփոխությունները

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մասը հանդիսացող փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրություններով:

## Հոդված 42

## Պարտավորությունների փոփոխումը

1. Սույն համաձայնագրի Կողմի գրավոր հարցմանը համապատասխան՝ Կողմերը պետք է անցկացնեն սույն համաձայնագրի շրջանակներում անհատական ցանկերում փոփոխությունների կատարման շուրջ խորհրդակցություններ: Խորհրդակցություններն անցկացնելիս Կողմերը պետք է ձգտեն, որ փոխշահավետ պարտավորությունների ընդհանուր մակարդակն առեւտրի համար չլինի պակաս բարենպաստ, քան այն մակարդակը, որը, նախքան այդ խորհրդակցություններն սկսելը, արտացոլվել է սույն համաձայնագրի Ա, Բ, Գ եւ Դ հավելվածներում նրանց անհատական ցանկերում:

2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ ԱՀԿ-ի անդամներ չհանդիսացող Կողմերը ԱՀԿ-ին միանալուց հետո երկու տարվա ընթացքում պարտավորվում են վերանայել սույն համաձայնագրի շրջանակներում անհատական ցանկերը՝ սույն համաձայնագրի մասնակիցների համար շուկայի հասանելիության պայմանների ապահովման նպատակով՝ ԱՀԿ-ի շրջանակներում իրենց պարտավորություններին չզիջող պայմաններով:

## Հոդված 43

## Համաձայնագրի դրույթների իրագործման մոնիթորինգը

Կողմերն իրականացնում են սույն համաձայնագրի դրույթների իրագործման մոնիթորինգ եւ ամեն տարի ԱՊՀ գործադիր կոմիտեին տրամադրում են համապատասխան տեղեկատվությունը՝ դրա ամփոփման եւ Անկախ պետությունների համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստին հետագա ուսումնասիրության համար:

## Հոդված 44

## Ուժի մեջ մտնելը

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

2. Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

## Հոդված 45

## Միանալը

1. Ուժի մեջ մտնելուց հետո սույն համաձայնագիրը բաց է ցանկացած պետության կողմից դրան միանալու համար:

2. ԱՊՀ մասնակից պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո՝ այդ պետության պարտավորությունների անհատական ցանկը սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարած բոլոր Կողմերի կողմից համաձայնեցվելու պայմանով:

3. ԱՊՀ մասնակից չհանդիսացող պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար

անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարած բոլոր Կողմերի համաձայնության եւ այդ պետության պարտավորությունների անհատական ցանկը նրանց կողմից համաձայնեցվելու պայմանով:

## Հոդված 46

**Գործողության ժամկետը, գործողության դադարեցումը, դուրս գալը**

1. Սույն համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու սույն համաձայնագրից՝ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցումն ավանդապահին ուղարկելով ոչ ուշ, քան դուրս գալուց 12 ամիս առաջ:

2. Սույն համաձայնագրի դրույթները, որոնք առնչվում են մինչեւ սույն համաձայնագրից Կողմի դուրս գալու ամսաթիվն իրականացված ներդրումներին, համապատասխան Կողմի համար ուժի մեջ կմնան դուրս գալու օրվանից հետո 10 տարվա ընթացքում:

Կատարված է Սոչի քաղաքում 2023 թվականի հունիսի 8-ին մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ պետությունների համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

| | |
|---|---|
| **Ադրբեջանի Հանրապետության կողմից՝** | **Ռուսաստանի Դաշնության կողմից՝** |
| ______________________________ | *[ստորագրություն]* |
| **Հայաստանի Հանրապետության կողմից՝** | **Տաջիկստանի Հանրապետության կողմից՝** |
| *[ստորագրություն]* | *[ստորագրություն]* |
| **Բելառուսի Հանրապետության կողմից՝** | **Թուրքմենստանի կողմից՝** |
| *[ստորագրություն]* | ______________________________ |
| **Ղազախստանի Հանրապետության** | **Ուզբեկստանի Հանրապետության** |

**կողմից**

*[ստորագրություն վերապահումով]*

**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Մոլդովայի Հանրապետության կողմից՝**

**կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ուկրաինայի**

**կողմից՝**

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ

**«Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագրի վերաբերյալ**

Սույն Համաձայնագրի 5-րդ գլխի ենթադրյալ խախտումից բխող հայցի դեպքում Ղազախստանի Հանրապետության դեմ՝ համաձայն սույն Համաձայնագրի 36-րդ հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետի «Կողմի և մյուս Կողմի ներդրողի միջև վեճերի լուծումը», արբիտրաժային դատարանի փոխարեն, վեճը քննում է «Աստանա» միջազգային ֆինանսական կենտրոնի դատարանը (Դատարան ՄՖԿԱ):

**Ղազախստանի Հանրապետության**
**Վարչապետ**

/ստորագրություն/

**Ա. Սմաիլով**

Հավելված Ե

**Ֆինանսական ծառայությունների**

**առեւտուրը**

1. Սույն հավելվածը կիրառվում է Կողմերի այն միջոցների նկատմամբ, որոնք վերաբերում են ֆինանսական ծառայությունների առեւտրի առանձնահատկություններին:

2. Սույն հավելվածի դրույթները չեն կիրառվում մատակարարվող ծառայությունների եւ այն գործունեության նկատմամբ, որն իրականացվում է պետական իշխանության գործառույթների կատարման համար ոչ առեւտրային հիմունքներով եւ ոչ մրցակցության պայմաններով, ինչպես նաեւ՝ սուբսիդիաների տրամադրման նկատմամբ:

3. Սույն հավելվածում գործածվող հասկացություններն ունեն հետեւյալ իմաստը՝

**պետական հիմնարկ**՝ Կողմի պետական իշխանության մարմին կամ ազգային (կենտրոնական) բանկ, կամ Կողմի կազմակերպություն, որը պատկանում է այդ Կողմին կամ գտնվում է այդ Կողմի վերահսկողության տակ, որը բացառապես իրականացնում է այդ Կողմի պետական իշխանության մարմնի կամ այդ Կողմի ազգային (կենտրոնական) բանկի կողմից պատվիրակված լիազորություններ

**լիցենզիա**՝ լիազորված մարմնի հատուկ թույլտվություն կամ փաստաթուղթ, որով, Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան, հավաստվում է ծառայությունների մատակարարի՝ Կողմի տարածքում գործունեության որոշակի տեսակ իրականացնելու իրավունքը

**ֆինանսական ծառայությունների առեւտուր**՝ սույն հավելվածում նշանակում է «ծառայությունների առեւտուր» եւ «գործունեություն», ինչպես սահմանված է սույն համաձայնագրի 1-ին հոդվածում

**ֆինանսական ծառայությունների ոլորտ**՝ ֆինանսական ծառայությունների ամբողջ ոլորտը՝ ներառյալ դրա բոլոր ենթաոլորտները, իսկ Կողմի պարտավորություններից բացառումների, սահմանափակումների եւ պայմանների առնչությամբ՝ Կողմի օրենսդրությանը համապատասխան առանձին ֆինանսական ծառայության մեկ կամ մի քանի կամ բոլոր ենթաոլորտները.

**լիազորված մարմին**՝ Կողմի մարմին, որը, այդ Կողմի օրենսդրությանը համապատասխան, ունի ֆինանսական շուկայի, ֆինանսական կազմակերպությունների (ֆինանսական շուկայի առանձին ոլորտների) կարգավորում եւ (կամ) վերահսկողություն ու հսկողություն իրականացնելու լիազորություններ.

**ֆինանսական ծառայություններ՝** ֆինանսական բնույթի ծառայություններ, որոնք ներառում են՝

ապահովագրական եւ ապահովագրությանն առնչվող ծառայությունները՝

1) ուղղակի ապահովագրությունը (ներառյալ համատեղ ապահովագրությունը)՝

կյանքի,

ոչ կյանքի.

2) վերաապահովագրությունը եւ ռետրոցեսիան.

3) ապահովագրական միջնորդությունը, ինչպիսիք են բրոքերային եւ գործակալական միջնորդությունը.

4) ապահովագրական օժանդակ ծառայությունները, ինչպիսիք են խորհրդատվական, ակտուարական ծառայությունները, ռիսկի գնահատումը եւ բողոք-պահանջների կարգավորման ծառայությունները.

բանկային եւ ֆինանսական ու վճարային այլ ծառայություններ (ապահովագրությունից բացի).

1) բնակչությունից ստացված ավանդների եւ վերադարձելի այլ դրամական միջոցների ընդունումը,

2) բոլոր տեսակների փոխատվությունների տրամադրումը՝ ներառյալ սպառողական վարկը, գրավային վարկը, ֆակտորինգը եւ առեւտրային գործառնությունների ֆինանսավորումը,

3) ֆինանսական լիզինգը,

4) վճարումների եւ դրամական փոխանցումների գծով բոլոր տեսակների ծառայությունները՝ ներառյալ վարկային, վճարային եւ դեբետային քարտերը, ճանապարհային չեկերը եւ բանկային մուրհակները,

5) երաշխիքները եւ պարտավորությունները,

6) սեփական միջոցների եւ հաճախորդների միջոցների հաշվին, արժույթի բորսայում, արտաբորսային շուկայում կամ այլ կերպ առեւտուրը՝

դրամական շուկայի գործիքներով (ներառյալ չեկերը, փոխանցման մուրհակները, դեպոզիտային սերտիֆիկատները),

արտարժույթով,

ածանցյալ պրոդուկտներով՝ ներառյալ, սակայն ոչ բացառապես ֆյուչերսները եւ օպցիոնները,

արժույթի փոխարժեքներին եւ տոկոսադրույքներին առնչվող գործիքներով՝ ներառյալ այնպիսիք, ինչպիսիք են սվոփների մասին համաձայնագրերը եւ տոկոսադրույքի մասին ֆորվարդային համաձայնագրերը,

փոխանցելի արժեթղթերով,

այլ գործիքներով եւ ֆինանսական ակտիվներով, որոնք կարող են գործարքի առարկա լինել՝ ներառյալ ձուլակտորներով ոսկին եւ արծաթը.

7) մասնակցությունը բոլոր տեսակների արժեթղթերի թողարկումներում՝ ներառյալ բաժանորդագրման կազմակերպումը եւ տեղաբաշխումը որպես գործակալ (հրապարակային կամ փակ բաժանորդագրման միջոցով) եւ այդ թողարկումների հետ կապված ծառայությունների տրամադրումը.

8) դրամական շուկայում բրոքերային գործառնությունները.

9) այնպիսի ակտիվների կառավարումը, ինչպիսիք են կանխիկ դրամական միջոցները կամ արժեթղթերի պորտֆելը, կոլեկտիվ ներդրումների կառավարման բոլոր ձեւերը, կենսաթոշակային ֆոնդի կառավարումը, պատասխանատու պահպանության ծառայությունները, դեպոզիտար եւ հավատարմագրային (տրաստային) ծառայությունները.

10) փոխադարձ հաշվարկների իրականացման ծառայությունները եւ ֆինանսական ակտիվների գծով քլիրինգային ծառայությունները՝ ներառյալ արժեթղթերը, ածանցյալ պրոդուկտները եւ այլ գործիքներ, որոնք կարող են գործարքի առարկա լինել.

11) ֆինանսական տեղեկատվության տրամադրումը եւ փոխանցումը, ֆինանսական տվյալների եւ այլ ֆինանսական ծառայությունների մատակարարների համապատասխան ծրագրային ապահովման մշակումը.

12) 5-15-րդ ենթակետերում թվարկված գործունեության բոլոր տեսակների գծով խորհրդատվական, միջնորդական եւ այլ օժանդակ ֆինանսական ծառայությունները՝ ներառյալ վարկավորման հետ կապված տեղեկատվական նյութերի տրամադրումը եւ ուղղակի ու պորտֆելային ներդրումների վերաբերյալ հետազոտությունների եւ առաջարկությունների վարկային վերլուծությունը, կորպորացիաների ձեռքբերման, վերակազմակերպման եւ ռազմավարության հարցերով առաջարկությունները:

Սույն հավելվածում այլ հասկացություններ գործածվում են համաձայնագրում նշված իմաստով:

1. Սույն համաձայնագրի Բ եւ Գ հավելվածներում անհատական ցանկում Կողմի նշած ֆինանսական ծառայությունների համար Կողմն ապահովում է, որ ֆինանսական ծառայությունների առեւտրի վրա ազդող բոլոր միջոցները կիրառվեն ողջամիտ, օբյեկտիվ եւ անկողմնակալ կերպով:

2. Ֆինանսական ծառայությունների մատակարարման համար թույլտվություն պահանջվելու դեպքում Կողմի լիազորված մարմինները Կողմի օրենսդրության պահանջներին եւ կարգավորման կանոններին համապատասխան ձեւակերպված համարվող դիմումը ներկայացնելուց հետո ողջամիտ ժամանակահատվածում դիմումատուին տեղեկացնում են դիմումի վերաբերյալ որոշման մասին: Դիմումատուի հարցման հիման վրա Կողմի լիազորված մարմինները հայտի ուսումնասիրության ընթացքի մասին տեղեկատվությունը տրամադրում են առանց անհարկի ուշացման:

3. Այնպիսի դրություն ապահովելու համար, որ որակավորման պահանջներին եւ ընթացակարգերին, տեխնիկական ստանդարտներին եւ լիցենզավորման պահանջներին առնչվող միջոցներով անհիմն արգելքներ չստեղծվեն ֆինանսական ծառայությունների առեւտրի համար, Կողմն իրավունք ունի համապատասխան մարմինների միջոցով մշակելու ցանկացած անհրաժեշտ կանոն, որը դրանք կարող են ստեղծել: Այդ կանոնները, ի թիվս այլնի, պետք է նախատեսեն, որ դրանց մեջ պարունակվող պահանջները՝

1) հիմնված լինեն այնպիսի օբյեկտիվ եւ թափանցիկ չափորոշիչների վրա, ինչպիսիք են ծառայությունը մատակարարելու կոմպետենտությունը եւ կարողությունը,

2) չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակի ապահովման համար,

3) լիցենզավորման ընթացակարգերի դեպքում ինքնին չլինեն ծառայության մատակարարման սահմանափակում:

4. Նախքան սույն հավելվածի 6-րդ կետին համապատասխան մշակված կանոններն ուժ մեջ մտնելը՝ սույն համաձայնագրի Բ հավելվածում Կողմերի անհատական ցանկերում նշված ֆինանսական ծառայությունների ոլորտների համար Կողմերը չեն կիրառում լիցենզային կամ որակավորման այնպիսի պահանջներ եւ տեխնիկական ստանդարտներ, որոնցով չեղյալ են համարվում կամ կրճատվում են այն օգուտները, որոնք տրամադրվում են սույն համաձայնագրի Բ հավելվածում՝ Կողմերի անհատական ցանկերում նշված պայմանների համաձայն:

Կողմի կողմից կիրառվող՝ լիցենզային կամ որակավորման պահանջները եւ տեխնիկական ստանդարտները պետք է համապատասխանեն սույն հավելվածի 6-րդ կետի 1-3-րդ ենթակետերում նշված չափորոշիչներին, եւ ողջամտորեն կարող են ակնկալվել այդ Կողմի կողմից սույն համաձայնագրի ստորագրման ամսաթվի դրությամբ:

5. Եթե Կողմը լիցենզավորում է կիրառում ֆինանսական ծառայությունների մատակարարների հիմնադրման եւ (կամ) գործունեության նկատմամբ, ապա այդ Կողմն ապահովում է, որ՝

1) հրապարակվեն կամ այլ կերպ հանրայնացվեն Կողմի լիազորված մարմինների անվանումները, որոնք պատասխանատու են գործունեության իրականացման լիցենզիաների տրամադրման համար,

2) լիցենզային ընթացակարգերն ինքնին չլինեն հիմնադրման եւ գործունեության սահմանափակում, եւ որ լիցենզային պահանջները, որոնք անմիջականորեն կապված են գործունեության իրականացման իրավունքի հետ, ինքնին անհիմն խոչընդոտ չլինեն գործունեության համար,

3) լիցենզային բոլոր ընթացակարգերը եւ պահանջները սահմանված լինեն Կողմի օրենսդրության մեջ, եւ որ Կողմի՝ լիցենզային ընթացակարգեր կամ պահանջներ սահմանող կամ կիրառող օրենսդրությունը հրապարակվի՝ մինչեւ այն ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դրվելու) օրը,

4) լիցենզիայի տրամադրման համար դիմումը ներկայացնելու եւ ուսումնասիրության համար գանձվող ցանկացած վճար ինքնին չլինի հիմնադրման եւ գործունեության համար սահմանափակում եւ հիմնված լինի Կողմի լիցենզավորող մարմնի ծախսերի վրա, որոնք կապված են դիմումի ուսումնասիրության եւ լիցենզիայի

տրամադրման հետ,

5) լիցենզիայի տրամադրման (տրամադրումը մերժելու) մասին որոշում ընդունելու համար Կողմի օրենսդրությամբ սահմանված ժամանակահատվածը լրանալուց հետո եւ դիմումատուի պահանջով՝ լիցենզիաների տրամադրման համար պատասխանատու՝ Կողմի համապատասխան լիազորված մարմինը դիմումատուին տեղեկացնի նրա դիմումի ուսումնասիրության ընթացքի մասին, ինչպես նաեւ այն մասին, թե արդյոք այդ դիմումը համարվում է պատշաճ ձեւակերպված: Ամեն դեպքում դիմումատուին տրվելու է դիմումի մեջ տեխնիկական ուղղումներ կատարելու հնարավորություն: Դիմումը չի համարվի պատշաճ կերպով լրացված այնքան ժամանակ, քանի դեռ չեն ստացվել Կողմի համապատասխան օրենսդրության մեջ նշված ամբողջ տեղեկատվությունն ու փաստաթղթերը,

6) այն դիմումատուի գրավոր պահանջով, որի դիմումի ընդունումը մերժվել է, Կողմի՝ լիցենզիաների տրամադրման համար պատասխանատու եւ դիմումի ընդունումը մերժած լիազորված մարմինը դիմումատուին գրավոր տեղեկացնի այդ մերժման պատճառների մասին: Սակայն այդ դրույթը չպետք է մեկնաբանվի որպես իրավասու մարմին ներկայացվող պահանջ՝ բացահայտելու այն տեղեկատվությունը, որի բացահայտումը խոչընդոտում է Կողմի օրենսդրության իրականացումը կամ այլ կերպ հակասում է հանրային շահերին կամ անվտանգության էական շահերին,

7) եթե մերժվել է դիմումի ընդունումը, դիմումատուն կարողանա ներկայացնել նոր դիմում, որտեղ նա կարող է փորձել վերացնել լիցենզիայի տրամադրման համար գոյություն ունեցած ցանկացած խնդիր,

8) տրամադրվող լիցենզիան գործի Կողմի ամբողջ տարածքում:

6. Կողմի տարածքում ֆինանսական ծառայությունների շուկաներում գործունեություն իրականացնելու համար լիցենզիաների տրամադրման կարգը եւ ժամկետները սահմանվում են այն Կողմի օրենսդրությամբ, որի տարածքում նախատեսվում է այդ գործունեության իրականացումը:

7. Սույն հավելվածում ոչինչ չի խոչընդոտում Կողմին ձեռնարկել պրուդենցիալ միջոցներ՝ ներառյալ այն ներդրողների, ավանդատուների, ապահովագրողների, շահառուների եւ այլ անձանց շահերի պաշտպանությունը, որոնց առջեւ ծառայությունների մատակարարը ֆիդուցիար պատասխանատվություն է կրում, եւ ձեռնարկել ցանկացած ողջամիտ եւ հիմնավորված միջոց՝ ֆինանսական համակարգի ամբողջականության եւ կայունության ապահովման համար: Եթե այդ միջոցները չեն

համապատասխանում սույն հավելվածի դրույթներին, ապա դրանք Կողմի կողմից չպետք է կիրառվեն որպես սույն համաձայնագրին համապատասխան այդ Կողմի ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց:

8. Սույն հավելվածում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Կողմին ներկայացվող պահանջ՝ բացահայտելու բանկային գաղտնիքի եւ ազգային օրենսդրությամբ պահպանվող այլ գաղտնիքի շարքին դասվող տեղեկատվություն, այդ թվում՝ անհատ հաճախորդների բանկային հաշիվների, գործառնությունների եւ ավանդների մասին տեղեկատվություն կամ ցանկացած այլ գաղտնի տեղեկատվություն:

Կողմի լիազորված մարմինն իրավունք ունի դիմելու մյուս Կողմի լիազորված մարմին՝ գաղտնի տեղեկատվության տրամադրման հարցմամբ: Նշված հարցումը կարող է բավարարվել Կողմի լիազորված մարմնի կողմից՝ պայմանով, որ այդ տեղեկատվությունը երրորդ անձանց չի բացահայտվի առանց այդ տեղեկատվության աղբյուր հանդիսացող լիազորված մարմնի նախնական գրավոր համաձայնության՝ բացառությամբ ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Հարցման հիման վրա գաղտնի տեղեկատվություն ստանալու դեպքում Կողմի լիազորված մարմինն ապահովում է այդ տեղեկատվության գաղտնիության պահպանման՝ դրա ծագման Կողմում առկա մակարդակից ոչ պակաս մակարդակ:

9. Կողմերը մշակում են Կողմերի՝ իրենց ֆինանսական շուկաներում գործունեության կարգավորման, հսկողության եւ վերահսկողության ոլորտում լիազորված մարմինների փոխգործակցության մեխանիզմներ, այդ թվում՝ բանկային ոլորտում, ապահովագրական ոլորտում եւ արժեթղթերի շուկայում ծառայությունների ոլորտում:

10. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ այդ Կողմի օրենսդրությունը, որը վերաբերում է կամ կարող է վերաբերել սույն հավելվածում ընդգրկված հարցերին, հրապարակվի պաշտոնական աղբյուրում, իսկ հնարավորության դեպքում՝ հատուկ հատկացված ինտերնետ կայքում այնպես, որ յուրաքանչյուր անձ, որի իրավունքները եւ (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Կողմի այդ օրենսդրությամբ, ունենա դրա հետ ծանոթանալու հնարավորություն:

Այդ օրենսդրությունը պետք է հրապարակվի այն անձանց իրավական որոշակիությունը եւ հիմնավորված ակնկալիքներն ապահովող ժամկետում, որոնց իրավունքները եւ (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Կողմի այդ

օրենսդրությամբ, սակայն ցանկացած դեպքում՝ մինչեւ այն ուժի մեջ մտնելու (գործողության մեջ դրվելու) օրը:

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է սույն հավելվածում ընդգրկված հարցերի վերաբերյալ ցանկացած անձի գրավոր այն հարցումներին պատասխանների տրամադրումը, որոնք առնչվում են գործող եւ (կամ) նախատեսվող օրենսդրությանը: Հարցումներին տրվող պատասխաններն այդպիսի շահագրգիռ անձին պետք է տրամադրվեն ոչ ուշ, քան գրավոր հարցումն ստանալու օրվանից 30 օրացուցային օր հետո:

11. Կողմը կարող է ճանաչել մյուս Կողմի պրուդենցիալ միջոցները՝ իր կողմից այն միջոցների կիրառումը որոշելու ժամանակ, որոնք վերաբերում են ֆինանսական ծառայությունների մատակարարմանը: Նման ճանաչումը կարող է հիմնված լինել շահագրգիռ Կողմի հետ համաձայնագրի կամ պայմանավորվածության վրա կամ կարող է տրամադրվել միակողմանիորեն:

12. Մյուս Կողմի պրուդենցիալ միջոցների ճանաչման մասին ինչպես հետագա, այնպես էլ գործող համաձայնագրի կամ պայմանավորվածության մասնակից հանդիսացող Կողմը մյուս Կողմերին տրամադրում է բանակցություններ վարելու հնարավորություն այդ համաձայնագրերին կամ պայմանավորվածություններին միանալու շուրջ, որոնք կարող են պարունակել կանոններ, այդ կանոնների կատարման հսկողություն եւ մեխանիզմ, եւ հնարավորության դեպքում, այդ համաձայնագրերի եւ պայմանավորվածությունների մասնակիցների միջեւ տեղեկատվության փոխանակման հետ կապված ընթացակարգեր:

Հավելված Զ

**Հեռահաղորդակցության ծառայությունների ոլորտում կարգավորման առանձնահատկությունները**

**Կիրառության ոլորտը**

Սույն հավելվածը պարունակում է սահմանումներ եւ սկզբունքներ, որոնք վերաբերում են բազային հեռահաղորդակցության ծառայությունների տրամադրման կարգավորմանը: Այդ ծառայությունների ցանկը ներկայացված է սույն համաձայնագրի Բ եւ Գ հավելվածներում:

**Սահմանումները**

**Օգտագործողներ** նշանակում է ծառայությունների սպառողներ եւ մատակարարներ:

**Հիմնական միջոցներ (սարքավորումներ)** նշանակում են ընդհանուր օգտագործման հեռահաղորդակցական ցանցի միջոցներ (սարքավորումներ) կամ ծառայություններ,

ա) որոնք մատակարարվում են բացառապես կամ առավելապես միակ մատակարարի կամ սահմանափակ թվով մատակարարների կողմից, եւ

բ) որոնք տնտեսական կամ տեխնիկական պատճառներով հնարավոր չէ փոխարինել՝ ծառայությունը տրամադրելու համար:

**Հիմնական մատակարար՝** մատակարար, որը բազային հեռահաղորդակցության ծառայությունների տվյալ շուկայում գործունեության պայմանների վրա (գներին եւ առաջարկներին առնչվող մասով) էական ազդեցություն թողնելու հնարավորություն ունի՝

ա) հիմնական միջոցների (սարքավորումների) նկատմամբ իր կողմից իրականացվող հսկողության արդյունքում, կամ

բ) շուկայում ունեցած իր դիրքի արդյունքում:

**1. Մրցակցության պաշտպանությունը**

**1.1. Հեռահաղորդակցության ոլորտում մրցակցությունը խախտող միջոցների կանխարգելումը**

Կողմերը միջոցներ կձեռնարկեն՝ թույլ չտալու համար, որ հիմնական մատակարար հանդիսացող մատակարարները՝ առանձին կամ միասին, կարողանան

նախաձեռնել մրցակցությունը խախտող գործողություններ:

### 1.2. Պաշտպանական միջոցները

Մրցակցությունը խախտող վերոնշյալ գործողություններն են՝

ա) հակամրցակցային խաչաձեւ սուբսիդավորմանը մասնակցելը,

բ) մրցակիցներից ստացված տեղեկությունները մրցակցության խախտմանը հանգեցնող եղանակով օգտագործելը, եւ

գ) հիմնական միջոցների (սարքավորումների) մասին տեխնիկական տեղեկությունները եւ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ՝ առեւտրային բնույթի համապատասխան տեղեկատվությունը ծառայությունների այլ մատակարարների ժամանակին չտրամադրելը:

## 2. Միացումը (միանալը)

Սույն կետի դրույթները վերաբերում են այն ընդհանուր օգտագործման բազային հեռահաղորդակցության ցանցերի կամ ծառայությունների մատակարարների հետ միացման հաստատմանը, որոնք մեկ մատակարարի սպառողներին հնարավորություն են տալիս միացում հաստատել մյուս մատակարարի սպառողների հետ եւ հասանելիություն ունենալ այն ծառայություններին, որոնք մյուս մատակարարի կողմից մատակարարվում են այն դեպքում, երբ Կողմն ստանձնել է համապատասխան պարտավորությունները:

### 2.1. Երաշխավորված միացումը

Կողմերը կապահովեն, որ հիմնական մատակարարին միացումն ապահովվի Կողմի գործող օրենսդրությանը եւ տեխնիկական նորմերին համապատասխան՝ ցանցի ցանկացած կետում, որտեղ դա տեխնիկապես իրագործելի է: Այդ միացումը պետք է ապահովվի՝

ա) ոչ խտրական պայմաններով (ներառյալ տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը) եւ ոչ խտրական սակագներով, ընդ որում, որակին առնչվող պայմանները պետք է լինեն ոչ պակաս բարենպաստ, քան այն պայմանները, որոնք նախատեսված են համանման ծառայությունների սեփական մատակարարների համար կամ ծառայությունների չփոխկապակցված մատակարարների կամ նրանց դուստր ընկերությունների կամ փոխկապակցված այլ անձանց համանման ծառայությունների համար,

բ) ժամանակին, կանոններին, պայմաններին (այդ թվում՝ տեխնիկական նորմերի եւ ստանդարտների մասով) եւ ծախսերի վրա հիմնված սակագներին համապատասխան, որոնք պետք է լինեն թափանցիկ՝ հաշվի առնելով տնտեսական իրագործելիությունը եւ մանրամասնեցվածության բավարար մակարդակը, եւ

գ) հարցման հիման վրա՝ օգտագործողների մեծամասնության համար հասանելի տերմինալներից բացի այլ կետերում, այն սակագների բազայի վրա, որոնք արտացոլում են անհրաժեշտ լրացուցիչ կայանքների ստեղծման ծախսերը:

**2.2. Միացման շուրջ բանակցություններին առնչվող ընթացակարգերի հրապարակային բնույթը**

Հիմնական մատակարարին միացվելուն առնչվող ընթացակարգերը պետք է լինեն թափանցիկ:

**2.3. Միացման մասին համաձայնագրերի թափանցիկությունը**

Կողմերը կձեռնարկեն միջոցներ, որ հիմնական մատակարարը միացման մասին իր համաձայնագրերը կամ միացման մասին համապատասխան առաջարկը հրապարակային դարձնի:

**2.4. Վեճերի լուծումը**

Հիմնական մատակարարին միացվելու մասին խնդրանքով դիմած ծառայությունների մատակարարը բողոքարկման իրավունք կունենա՝

ա) ցանկացած պահի կամ

բ) ողջամիտ եւ հրապարակայնորեն սահմանված ժամանակահատվածի ընթացքում այն ազգային մարմնին, որը կարող է լինել սույն հավելվածի 5-րդ կետում նշված անկախ կարգավորող մարմինը, միացման համապատասխան կանոններին, պայմաններին եւ սակագներին առնչվող վեճերը ողջամիտ ժամանակահատվածում կարգավորելու համար, եթե այդ կանոնները, պայմանները եւ սակագները չեն սահմանվել նախօրոք:

**3. Համընդհանուր ծառայությունը**

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի սահմանելու համընդհանուր ծառայության գծով այն պարտավորությունները, որոնք նա ցանկանում է կատարել: Այդ

պարտավորությունները չեն դիտարկվի որպես հակամրցակցային՝ պայմանով, որ դրանք իրականացվեն մրցակցության տեսանկյունից թափանցիկության, խտրականության բացառման եւ չեզոքության հիման վրա եւ չեն լինի ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է Կողմի սահմանած համընդհանուր ծառայության տվյալ տեսակի համար:

**4. Լիցենզավորման չափորոշիչների հրապարակային բնույթը**

Լիցենզավորման ընթացքում թափանցիկ պետք է լինեն՝

ա) լիցենզիան ստանալու բոլոր չափորոշիչները եւ լիցենզիայի վերաբերյալ հարցման մասին որոշումն ընդունելու ժամկետները, եւ

բ) անհատական լիցենզիաների տրամադրման պայմանները:

Լիցենզիայի տրամադրումը մերժելու պատճառների մասին պետք է տեղեկացվի լիցենզիայի հարցումը ներկայացրած անձին՝ վերջինիս խնդրանքով:

**5. Կարգավորող մարմնի անկախությունը**

Կողմերը կապահովեն, որ կարգավորող մարմինը գործի բազային հեռահաղորդակցության ծառայությունների մատակարարներից անկախ եւ հաշվետու չլինի նրանց: Մարմնի որոշումները եւ ընթացակարգերը պետք է տվյալ շուկայի բոլոր մասնակիցների նկատմամբ օբյեկտիվ բնույթ կրեն:

**6. Սահմանափակ ռեսուրսների հատկացումը եւ օգտագործումը**

Ռադիոհաճախականության տիրույթի ռեսուրսների եւ համարագրման ռեսուրսի բաշխումն ու օգտագործումն իրականացվում են Կողմերի օրենսդրությանը համապատասխան: Ռադիոհաճախականության տիրույթի եւ համարագրման ռեսուրսների բաշխման եւ օգտագործման համար լիցենզիոն վճարների չափը որոշվում է ազգային օրենսդրությանը համապատասխան:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2023 թվականի հունիսի 8-ին ստորագրված «Ծառայությունների ազատ առևտրի, հիմնադրման, գործունեության և ներդրումների իրականացման մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**